

West Glen Co U

Long

Map to LFC

6739

Ums

6444

Comp - Amphipogon C
1920

2003



ՌԵՍՍԱՆՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՓԵՐՆԱԳՈՐԾԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարները բոլոր երկրներին, միացե՛ք

ՈՒՆԵ

ՇՈՒՄ

ՍՏԵՆԱՆ

ՍՏԵՆԱՆ

(464364)

1332

15/11

6444

1006
27402

ՌԻՐԷԵԼՔԸ

(Էսիպլինի առաջարկով)

ԵՐԿ. ՏԳԱՅՐ



Պատկերված անդրեանի կերպով արտադրու-
մի է կապիտալիզմի զարգացումը, անսկի-
զիների է հասցրել նրա կրիզիսը, ժողո-
վրդին դրել է անխուսափելի երկրորդական
առջև կործանում կամ անկախագ զնախան
բաշխի դեպի սոցիալիզմ

Ն. ԼՆՆԻՆ

(С. АТЕНЯН. ГДЕ ИСХОД?)

№ 1.

Հրատարակություն

№ 1.

Հայկ. կործանի կոմիտարիատի (Խոստով) Կոմիտեանի ճիւղի

Ն ա ր - Ն ա խ ի թ հ ա ռ

1920 թ.

6739

Մ ՍԻՍՏԱՐԱՆ.

Այսօր, երբ օր-օրի վրայ ծաւալւում ու խորանում է միջազգային պրոլետարական յեղափոխութեան ընթացքը, երբ բոլոր իմպերիալիստական խոշոր պետութիւններն անհրաժեշտ է մտնում՝ հակառակորդականութեն ու յաղթական քայլերով յառաջխաղացող կոմունիստական ուրուականի հանդէպ, երբ համայն մարդկութիւնը բաժանւած երկու անհաշտ ըմբռնութիւններով ու պրոլետարների, շահագործողների ու շահագործւողների—մահացու կռիւ է ըմբռնում—կանխորդեօք կարիք ապացուցանելու, որ երկրագնդի վրայ էլ չի կարող ազատ մնալ մի ժողովուրդ, մի հոգամաս, որ կամայ թէ տկամայ և շատ յաճախ անկախ իր կ'օքից, մասնակից չլինի համամարդկային այն մեծ հրդեհին, որի անունն է միջնազգային սոցիալիստական յեղափոխութիւն:

Երկու միաշափ աւազակային խմբակցութիւնների մէջ մղւող իմպերիալիստական պատերազմը ոչ միայն չլուծեց այն բոլոր հարցերը, որոնց համար իրր թէ մղւում էր, ոչ միայն չբերեց ժողովրդներին ու ազգներին որոշ ու կայուն համակեցութիւն, այլ ընդհակառակն այդ հարցերն աւելի ևս բարդացան ու արեցին, և մարդկութիւնը դրեց ընդհանրական հասարակարգի համար անել հակասութեան հանդէպ:

Ի շարս այլ հարցերի՝ անլուծելի մնաց նաև մանր ազգերի ինքնորոշման խնդիրը: Իհարէ, այսօր ևս դեռ կան մարդիկ, ոչ այնքան միամիտ, որքան բխմամիտ կամ խարերայ, որ ընդունակ են յորջորջել Լեհաստանի, Ֆինլանդիայի, Չեխիայի և այլ մանր ժողովրդները ազատութեան մասին, աչքաթող անելով այն, որ այի ժողովրդները հասարակ մի գործիք են ուժեղների ձեռքին և շահագործման աղբիւր ժամանակաւոր կոմբինացիաների ընթացքում, որ նրանց կողքին կան նաև Բուլղարիան, Տաճկաստանը և Հունգարիան, էլ չասենք Իրանդիան, Եգիպտոսը, ԵՀնդկաստանը՝ կայն:

1. 86423



6444-2004

Իսկ հայ ժողովրդական մասաների բանտը, այսպէս կոչւած հայկական հարցը...

Եթէ պէտք էր ըթմաթութեան հասած միամիտ լինել, որպէսզի մի թշուա, խեղճ ժողովուրդ ժամանակին ազգայնական անիրազործելի, բայց կործանարար ցնորքներով տարւած հարէր երկու իմպերիալիստական գիշատիչ լանակներից մէկին—ապա այժմ, երբ ամեն ինչ տխմարի համար իսկ այնքան պարզ է ու հասկանալի,—հարկւոր է արդէն լինել խաբեբայ՝ ու ոճրագործ, բուրժուազիայի զրպանի հշու և ստոր վարձկան, որպէսզի արնաքամ եղած և կիսով չափ ոչնչացած մի ժողովուրդ իր փրկութիւնն ակնկալի տֆն գիշատիչներից, որոնց անվերապան հարելով՝ խզից իր բոլոր համակեցական կապերն իր հարեան ժողովրդների հետ և այդ իսկ պատճառով իր անորակելի դըժբախտութեան նպաստեց:

Այսօր՝ և այն րատ ամենայնի վերջին անգամ, երբ կարմիր ու սպիտակ պրոլետարական յեղափոխութեան և բուրժուական հակայեղափոխութեան պայքարի հաւժկու ալիքները զարնւում են արդէն Անդրկովկասեան սահմաններում՝ պատրաստ ընդգրկելու նաև հայ ժողովրդական մասաներին—իր ամբողջ մեծութեամբ հայ ժողովրդի առաջ ծառանում է ճակատագրական հարցը՝—Ինչ անել, ձեր է ելքը...

Ընկ. Աստնեանք ոչ միայն տեսականօրէն գիշուած մարքսիստական—կոմունիստական իդէոլոգիայով, այլ և լաւատեղեակ հայ ժողովրդի վիճակին՝ հրապարակ է գալիս ներկայ աշխատութեամբ մի աւելորդ, գուցէ վերջին անգամ զոյց տալու նրանց, Կովքեր գեո կուրօրէն չարունակւած են ընթանալ հին, կործանարար ուղիով և խարազանելու, դիմադուրկ անելու այն ոճրագործ սրիկաներին, որոնք գեո համաձայնուած են դիւալին խաղ խաղալ չարաբախտ հայ ժողովրդի կենդանի մնացած թեկորների գլխին:

Լուկաշին:

ԴՃՈՒՆԱՐՆ ԴԻՈՒԹԻՒՆ

Երկրագնդի վրայ Թերևս ոչ մի ժողովուրդ ահապիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրելի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տեղիտորեայի վրայ:

Կեանքի բոլոր տապաւնիներն էլ արտաշնչում են դառն ու լեղատ օդ և քուսուարում ամբողջ երկիրը. ապանելով նրա կենսական ուժերը, խեղզելով նրա ձգտումներն ու կամքը: Մի հակադասեան մուրճ տխրութեան և մաայութեան, տանջանքի և մըմունջի կի՛ք է գամել այդ դժբախտ երկրի արիւնաների՝ ճակատին: Շնչաւոր էակները, Թէ անշունչ իրերը, մերկ լիոներն ու անտառապատ սարերը, Թէ գանգերով լեցուն ձոքերն ու արիւնով ողողւած ցաշտերը, ամայի գարձած դիւղերը ու աւերւած քաղաքները, դաշտերում ու քարձրւանդակներում ապրող չունեոր գիւղացիները, Թէ քաղաքների խուցերում ու աւերակներում գոյութիւնը քարչ աւող քաղքենիները, տեղական ընիկ՝ խեղճալում ու թշուաութեան մատնւած ազգաբնակիչները, Թէ Թաշոււած ու սովալլուկ, լքւած ու վայրենացած գաղթականութիւնը—բոլորն էլ վշտալից հայեացքը արճատալա երկնակամարին յառած՝ օդնութիւն են հայցում, ելլր են որոնում:

Հայաստանում գոյութիւնը դարձել է անէծք: Կեանքը՝ դժոխք:

Եւ իբօք, Հայաստանի կեանքի ձր ստապաբէզն էլ վերցնելու լինենք, ամեն անդ կը դըռնենք սոսկալի գրութիւն, օրհասական կա-

չաթիւն: Իւրացանշիւրի աչքերի ուղիս ցցւած է ամենից առաջ: Իւր ահուկի կերպարանքով այն ստակալի վառնացք, որ ապանում է այդ երկրամասի վրայ ապրող ժողովրդական լայն զանգւածների սոսկ զոյւթեանը՝ զնենալըսնք հայեր թէ թուրքեր, եզիզին և թէ քրդեր: Իւր ամբողջ լրջութեամբ ծառացած Ֆիզիքական գոյութեան այդ վառնագր արտայայտւում է երկու ձևով: Նախ՝ ժողովուրդը կանխած է բնաջնջման առջի շնորհիւ այն զինւած ընդհարումների, որ համարեա ամենէօր տեղի են ունենում նրա՝ տարրեր ծագումն ունեցող զաւակների միջև: Միևնոյն վայրում, կողք-կողքի առանձնակ տարիների ու դարերի ընթացքում տարրոյ հարազատ զաւակներին այնքան են թունաւորել և այնքան են օրէցօր թունաւորում, այնքան են խորացրել նրանց մէջ ստեղծութիւնը ու թշնամութիւնը և այնքան են այդ օրէցօր խորացնում, տարածում ու արժատացնում, որ նրանք իրար կռաւորում են անխնայ, սրի են քաշում բոլորին առանց բացառութեան և առանց այլեւայլութեան: Ժողովուրդը ոչնչանում է բնաջնջ է լինում ոչ միայն անմիջական կոտորածով ու ջարդով, այլ և գրեւած ընդհարումների տանձութիւնից և եպատեղապահեան զրոթեան: Բայց այսու մից անխուսափելիօրէն առաջ եկած և շարունակարար առաջ եկող տնտեսութեան և անօթութեան հետեանքով: Աւերւած են երկրի արտադրական ոյժերը, քայքայւում է ժողովրդական անտեսութիւնը, սովի և մահացութեան է ենթարկւում ժողովուրդը:

Լարւած գրութիւն է ապրում Հայաստանի ժողովուրդը նաև այսպէս հոշւած արտաքին՝ մասնաւորապէս մանկեղանի մասնցի շնորհիւ: Հայ ժողովրդի գլխին ոչնչում է մանկեղանի սուրբ, իսկ մանկեղանի մու-

ղովրդի գլխին՝ լուսաւորչական սուրբ: Զգաւած և քանկութիւն կայ մի կողմից հին, բաւի կերպով, ուժի միջոցով գծած սանձանները նոյնպիսի բանութեամբ պանդանել, իսկ միւս կողմից ոչ նաեւ բանութեամբ նախանաներ հիմնել: Զգաւած և քանկութիւն կայ մի կողմից ճաւաթի ալգը՝ ինչ գնով էլ ուզւած է լինի, իսկ միւս կողմից՝ ընդարձակել պատութեան սանձանները՝ թէկուզ երկիրն ամայանայ և ողորի արիւնով: Հայ ժողովուրդը, անշուշտ, չի կարող և չգիտի նանդուրթի որևէ լուծ, ինչպէս նաև մանկեղանի լուծը: Սակայն սուր շղջացնողները իշխանութեան սովոր և իշխանութեան ձգտող գառակարգերն են, իսկ գէնքերի շաչիւնից տաժողները՝ ժողովուրդներն են, որանք ամենամեծ հեղաւթեամբ և առանց մի կաթիլ արիւնի, առանց որևէ քայքայումի կարող էին լուծել սանձանների վէճը Այդ վէճը ձեռնառու է միմիայն գեկաժարող գառակարգերին, որովհետև նախքան չէ տալիս ժողովրդական մասնաւորներին հանգիստ և կենտրոնացած ուղղորդութեամբ ներքին լիքեց համար նոր կեանք ստեղծելու գործին: Միևնոյն ժամանակ նրանց գառակարգային պայքարի գիտակցութիւնը, թուլացնում և ապանում է նրանց տեղաւորութիւնը, պարալիզացնում է նրանց՝ սոցիալական կեանքի լաւաղոյն կազմակերպութիւն ստեղծելու ձգտումն ու կամքը:

Ենարիւ զինւած ընդհարումների և սանձանների կռիւ ու թշնամութեան՝ ժողովրդական ստորին զանգւածները ոչ միայն կռաւորում և սրախողովող են լինում, ոչ միայն քանգւում և աւերում են, այլ և այլապէս և վայրենանում են, կորցնում իրենց բաղադրականութեան գերջին նշանները և ընկնում նախանորդ վիճակի մէջ: Փաղթականութիւնը, որևէ թիւը հարկը հաղարների է համարում, բոլորապէս այլապէս:

վայրենացել է՝ բառիս իսկական իմաստով: Գոյաթեան
կուսի սոսկալի ծանր պայմանները անգասակարգութեան
ցրել, անասնադրել, գազանացրել են մարդկային կե-
տարանը կրող այդ էակներին, զրկել նրանց բարոյա-
կան տարրական նորմաների մակերևոյթական բժբե-
նութից: Այժմ, երբ ըրոր միւս քաղաքակիրթ երկրնե-
րի ժողովուրդները հակայական քայլերով առաջագիծում
են, մոտաւանդ քաղաքական և սոցիալական ասպարի-
զում, մեր երկրի ժողովուրդը՝ շնորհիւ իւր ֆիզիքա-
կան դոյութեան վասնդւածութեան, բնգնակառակը,
նոյն սրագութեամբ յետադիմում է, դեպքապայիտի
ենթաբկում: Ամբողջ քաղաքակրթւած աշխարհում ժո-
ղովուրդները բաղմապատկում եռանդով, մեծ վճա-
կանութեամբ և անձկուն երկաթէ կամքով սկսել են
ջախջախել իրենց անանեական, քաղաքական և դա-
րափարտական յուժը: Իսկ մեր ժողովուրդը, բնգնակա-
ռակը, սախաւած է ոչ միայն դատապարտւած լինել
լուսնեան և անգործնէութեան, այլ և չլինքը ծաւել
նոր, աւելի ծանր, աւելի ճշդ լծին, որ վերջնակա-
նապէս պիտի սարկացնէ նրան...

Միւս կողմից ժողովրդի ֆիզիքական դոյութեանը
գերեզման են դուրում սովաւ ցուրտը, հիւանդութիւն-
ներն ու համաճարակը: Սովն ու համաճարակը թէև
«դանդաղ», բայց մշտապէս ու անխնայ ճնշում են՝ բա-
սիս իսկական իմաստով, ժողովրդի ստորին խաւերը:
Եւրոպ տրսկում է այն հատուկապէս տեղեկութիւններից,
որ երբեմնապէս միայն երևում են մամուլի մէջ, տե-
ղեկութիւններ, որոնք դալիս են գառնալիօրէն ապա-
ցուցելու, որ Հայաստանի ժողովուրդը մեռնում է, ոչն-
չանում, խուլ, լուս ու անմաւունջ կերպով վերանում
աշխարհից: Մարդիկ կուրացած են ուղում ձեռնալ,

չեն ուղում տեսած լինել այն գառն երևոյթը, որ շատ
անդաբեկան բան է առում նրանց: Նրանք կարծում
են, որ եթէ փակեն իրենց աչքերը՝ երևոյթն էլ կըվի-
րանայ և իրենք էլ կաղաւաեն լեղոս բմպնիքից:

Սակայն ժողովրդի իսկական և անկաշառ, բայց
միայն սակաւաթիւ բարեկամները հափազանց անմխի-
թաբ տեղեկութիւններ են հաղորդում: Ալեքսանդրապո-
լի դաւառի Համաժյու շրջանի բժիշկներից մէկը, որի
ձեռնիքեցութիւնն, բոտ երևոյթին, չունի հայոց նա-
խարարութեան նոյնիսկ ամբողջ կազմը, շատ «հեաա-
քրքրական» և վերին աստիճանի գուսուցանելիս վիճա-
կադրական տեղեկութիւններ է հաւաքել իւր շրջանի
16 դիւղի բնակիչների մահացութեան վերաբերալ:
Բանից դուրս է գալիս, որ այդ շրջանում (որը Իիլիջա-
նի և Դարաքիլիտայի շրջաններից չիտոյ առաջին տեղն
է բնում ամբողջ հանրապետութեան մէջ իւր բարե-
կեցութեամբ) ամառայ երկու ամիսների (յուլիս և օ-
գոստոս) ընթացքում միմիայն քաղցից ու համաճարա-
կից միջին թւով մահացել են 130 հոգի մի ամսում:
Եթէ մահացութեան այդ բանակը յարաբերութեան մէջ
դնելու լինենք նոյն 16 դիւղի բնակչութեան թիւ հետ,
կտնենք, որ իւրաքանչիւր 1000 հոգուց մեռնում են
60 հոգի: Աւելի վատթար, աւելի սոսկալի պատկեր է
ներկայացնում ժողովրդի մահացութիւնը մայրաքա-
ղաքում երևանում: Այդտեղ նոյն ամիսների ընթաց-
քում մեռել են ամսական միջին թւով 784 հոգի, որ
նշանակում է 1000-ից 161 հոգի: Նոյնմեքերի սկզբների
ինամատարութեան նախարարը պարլամենտի ամբիո-
նից յայտարարել է, թէ ամիսը մի քանի հազարի է
հասնում մեր հանրապետութեան մէջ սովից մեռնողնե-
րի թիւը: և որպէսզի պատգամաւորների հոգեկան
անգորքը չխանդարէ՝ նա աւելացրել է, «իմ տեղեկու-

Քիւնները շատ ստույգ են: Արքան էլ ստույգ լինեն
 նախարարի աւած տեղեկութիւնները, այնուամենայնիւ
 պէտք է որոշ տարածութիւն գնել այդ կաղնոննր տեղե-
 կութիւններէ և ձգնարաութեան միջև: Եթէ չմի փոք-
 րիկն կարելիաիւ մացնենք այդ «ստույգ տեղեկութիւն-
 ների մէջ և աւերացնենք նաեւ համաձայնակից մեծնող-
 ների թիւը, ապա չմի բանի հազարիս փոխարէն կը
 ստանանք ճշմարտութեան մօտ մի քանի տասնեակ հա-
 ջար մահացութիւն: Իրօք որ ժողովուրդը բնաջնջում
 է, վերանում է, գնում է գէպի հնախօսութեան գիրկը:
 Եթէ կոտորածն ու սրածութիւնը, սո՛ղն ու համաձա-
 բակը շարունակեն մեր երկրում այն տեմպով, ինչ
 տեմպով որ տեղի են ունեցել մինչև այժմ, համոզւած
 պէտք է լինել, որ հեռու չէ այն օրը, երբ երկրում
 պիտի վխտան միմիայն վայրենի գաղանները և գիշա-
 ւիչ թաշունները...

Մահացութեան չափ զարնուրելի է նաեւ Հայաս-
 տանի ժողովրդի չքաւորութիւնը, տնտեսական քայ-
 քայածութիւնը, որ ոչ միայն չէ նւազում, չէ բարե-
 լաւում, այլ ընդհակառակը, աճում և վատթարանում
 է: Երանում և խորանում է: Հայոց կառավարութիւնը,
 զբաղւած և տարւած լինելով յոյժ առաջնակարգ և կա-
 ջնորագոյն գործերով, ժամանակ չունի ժողովրդի մար-
 մինն ուսող և զերեզմանս իջեցնող խոցերը նայնիակ
 երապարակ հանելու, ուր մնաց թէ բուժելու: Նա մինչև
 օրս չկարողացաւ, աւելի ճիշտ՝ չէ ցանկանում կազմակեր-
 պել վիճակագրութիւն, որ հրապարակ հանէր ժողովրդի
 կեանքի դժոխային դրութիւնը: Դա նրան պէտք չէ-
 որքան մութ ու անյայտ թողնեն կեանքի դժնդակ պայ-
 մանները, որքան քողարկւած մնայ ժողովրդի չքաւո-
 րութիւնը, սովը, մահացութիւնը, քայքայւածութիւնը՝
 այնքան աւելի լաւ: Բայց և այնպէս, իրօք, ժողովրդի

ցաւով ապրողները կենդանի ապաւորութիւն ունեն, որ
 Հայաստանը ոչ միայն ընդարձակ գերեզմանոց է, այլև
 ահաւելի չքաւորութեան, տաղաչի աղքատութեան, ան-
 առհաւն կարօտութեան երկիր: Ժայր քայքայման հա-
 սած, անդունդը դալարող մի երկիր: Մեր ձեռքի տակ
 կան թէև չնչին, բայց պերճախօս վիճակագրական
 թւեր, որոնք կոյրերին անգամ տեսանելի կարող են
 դարձնել զրութեան ողբերգութիւնը: Վերայիշույր ժրջ-
 կի հաւաքած տեղեկութեան համաձայն՝ նրա ուսումնա-
 սիրած շրջանի 14 հայ գիւղերի բոլոր ծուխերից մի-
 միայն 8%-ն է ունեւոր, իսկ 92%-ը՝ չքաւոր: Երկու-
 թուրք գիւղերի բոլոր ծուխերից 15%-ն է ունեւոր, իսկ
 85%-ը՝ չքաւոր: Նշանակում է՝ միջին և մօտաւոր
 հաշուով իւրաքանչիւր 100 ծուխից 90-ը գտնւում է
 չքաւորութեան, կարօտութեան, զրկանքների մէջ, այն
 էլ մի շրջանում, որը համարւում է բարեկեցիկ: Եւ
 ժողովուրդը ոչ միայն այդպիսի անմխիթար ու անառ-
 ւելի զրութեան մէջ է գտնւում, այլև յոյս չկայ դուրս
 դալու այդ սոսկալի չքաւորութեան և սովի ճիրաննե-
 րից: Այդ շրջանի 9-ը հայկական գիւղերը ցանկը են ի-
 բենդ վարելահողերի միմիայն 20%-ը, իսկ երկու-
 թուրքական գիւղերը՝ միմիայն 33%-ը: Պարզ է, որ
 գիւղացիութիւնը արորսելու է չքաւորութեան ծան-
 րութեան առի, չէ կարողանալու ապրել, մեռնելու է:
 չէ կարողանալու պահել իւր դուլութիւնը այն կէս ֆունտ
 հացով, որ նա ստանում է «բարեգործ» Ամերիկայից:

Անշուշտ, այդ ողորմելի կէս ֆունտ հացը չէ կա-
 րող փրկել քաղցած ժողովուրդին մահեան ճիրաններից:
 Բայց դեռ հարց էլ է՝ ստանում է նա այդ կարօ հացը
 և պիտի կարողանայ ստանալ այն: Ինձրկէ, ոչ: Պա-
 ւաճարութիւնը ինքն է հաղորդել խնամատարութեան
 մինիստրի քերանով, որ ընդօստի բաժանումը հանգի-

պում է դժարութիւնների. հարուստները և ուժեղները
խլում են տկարների ձեռքից հացարածինը և մատ-
նում են վերջիններիս քաղցիւն: Դա դեռ քիչ է: Մի-
քիտորը մինչև անգամ չքաշեց յայտարարելու, թէ
սկստաւարութիւնը չունի ստոյգ վիճակագրութիւն և
չգիտէ, ում և ինչպէս պէտք է կատարել նպաստի բաշ-
խումը: Սովամահութեան բուն պատճառը, անշուշտ,
գրանուց չէ կայանում. քաղցած ժողովուրդը չէ կա-
րող կշտանալ կէս փունտ հացով: Բայց դա աղէկացու-
ցիւ է կուրիոյ է, որ կատաւարութիւնը մինչև օրս չունի
վիճակագրութիւն: Սեփական անկարողութեան, բացար-
ձակ ապկիւարութեան ինքնամերկացումն է, թէ սկստա-
ւարութիւնը չգիտէ ինչպէս պէտք է կատարել բաշ-
խումը: Այն, որ կատաւարութիւնը չգիտէ ով է քաղ-
ցած և ով է կուշտ, այն, որ նա չէ կարողանում կշտ-
ակել հարուստների և ուժեղների դէմ, դա ինքնին ապա-
ցոյց է, որ նա իւր էութեամբ կուշտների, ուժեղների եւ
հարուստների կատաւարութիւն է. այլ ոչ թէ քաղցած-
ների, տկարների, չքաւորների կատաւարութիւն: Ար-
դեօք ուժեղների և հարուստների դադափարական գրու-
նապանների ներկայացուցչութիւն չէ՞ այն պարլամեն-
տը, որ կատաւարութիւնը համարձակութիւն է ունե-
ցել անպատիժ՝ կերպով անել նման յայտարարութիւն-
ներ. այն պարլամենտը, որը բնական է համարել և
թոյլատրում է ուժեղներին խել թոյլերի բերնի հացը.
այն պարլամենտը, որը ժողովրդի՝ թոյլերի և տկար-
ների աչքերին թող փչելու համար, նրանց խաբելու և
զայրոյթի օրինկար փոխելու համար ընդունում է Դաշ-
նակցութեան պաշտօնական թերթի խելը՝ կորցրած,
խիղճը՝ փառասքի հանած հրապարակախօսների այն խո-
րատանկ կատողութիւնը, թէ սկստաւարութիւնն է մե-

զատը. որ սեփականաւորում է նրանց, որոնք ապրում
են թոյլերի ձեռքից խլած հացով» («Յատաջ» №13)...

Եթէ հացի բաժանումը այդչափ խայտառակ և
սոսկալի գրութեան մէջ է, ապա ինչպիսի գրութեան
մէջ պիտի լինի կենսական միւս անհրաժեշտ մթերքնե-
րի և իրերի բաժանումը. Բացարձակ գողութիւնն ու
թալանը, սանձարձակ սպեկուլեցիան ծայր աստիճա-
նի են հասցրել ժողովուրդի չքաւորութիւնն ու աղքա-
տութիւնը. զրկանքն ու տանջանքը, իսկ միւս կողմից
դեղկութիւն ու շալլութիւն առաջ բերել հասարակու-
թեան վերին շերտերում, նորագոյն բարձր պաշտօն-
էութեան շրջաններում, ակզականների ու խնամինքերի
մէջ. Այդ պայմանները այնքան էլ կորստարեր, կոր-
ծանարար, մահացու հարւած չէին կարող տալ ժողո-
վուրդի դէմ սոսկ գոյութեանը. եթէ միևնոյն ժամա-
նակ շինարարական գործ կատարէր ժողովրդական
անտեսութեան տապալէզում: Սակայն այդ էլ չկայ: Չկայ
նաեւ մի ճիւղը, մի անցք, ուսկից երեսը յուսադրական
փայլ փաղաւյ համար: Հայաստանի տնտեսական կեան-
քը ոչ միայն քայքայելու ու կործանելու է, այլ փորձեր
էլ չեն անում վերականգնելու, վերաշինելու այդ
կեանքը: Արտադրութիւնը մեղ մօտ կանգ է առել պար-
զապէս: Ոչ միայն աշխատանքի ճեղքերն են նւաղել ու
զրկատել, այլ և արտադրական ուժերն են քայքայել
ու ոչնչացել: Կատաւարութիւնը վիճակագրութեան կա-
րիքը չէ դրում, աւելի ճիշտ՝ վախենում է նրա անբար-
բառ թիւրի լոյսից, ուստի անկարելի է սրտել ոչ մէ-
կի, ոչ էլ միւսի կործանման չափը: Մօտաւոր դադա-
փար կարող է տալ այն փաստը, որ Համամելի շրջանի
14 հայկական գիւղի 3265 ծուխից ամառը ըողորովին
զուրկ է եղել աշխատող ձեռքերից 937 ծուխ, բոլոր
ձիւրի համարիւմ 1/3 մասը: Վերջին ամիսների զօրա-

կոչի և մահի առաջ հոգնած պատճառով աշխատող ձեռքերը աւելի նւազած, աւելի պակասած կլինեն: Մասամբ զրա, մասամբ էլ ընդհանրապէս արտադրական ուժերի քայքայման ոչնչացման պատճառով օսկկալիօրէն ընկած է գիւղատնտեսութիւնը: Համայնի շրջանի 16 հայ և թուրք գիւղերի 11572 գետնատին վարելահողից ցոյւնել է միմիայն 2158 գետնատին, այսինքն համարեա վեցերորդ մասը: Կարելի չկայ կանոց առնել գիւղատնտեսութեան միւս ճիւղերի վրայ ևս, նախ՝ ճէնց այն պատճառով, որ հողագործութիւնը կազմում է մեր չքաւոր գիւղացիութեան գլխաւոր աղբիւրը, ուստի նա կարող է տալ մեր գիւղատնտեսութեան քայքայւածութեան ցայտուն պատկերը, և երկրորդ՝ որ տնտեսագիտութիւնը և մանաւանդ մշակոյթային գիւղատնտեսական գրողները համարեա վերացել են: Պարզ է, որ գիւղացիութիւնը չէ կարողանալու, հնարաւորութիւն չէ ունենալու իւր կորացած մէջքն ուղղել իւր գոյութիւնը պահպանել, իսկ մուրացկանութեամբ ապրել՝ անկարելի է: Նա գնում է և գնալու է, գէպի մահ, նա մեռնում է և մեռնելու է, եթէ օժտեալին գրութիւնը շուտով և արմատապէս չփոխւի:

Եթէ մի երկրում, ուր գիւղատնտեսութիւնը ժայռանման քարութեան մէջ է գտնւում և նոյնիսկ քայքայման պայտս ողորդի է, այն էլ այնպիսի երկրում, որը գերազանցօրէն գիւղատնտեսական է, ապա պէտք է խնայատիրական պարզ ու հասկանալի լինի արհեստագործութեան և արդիւնաբերութեան ընկածութիւնը: Մեր երկիրն ընդհանրապէս հարուստ չէ նոյն գորգացած արդիւնաբերութեամբ: Իսկ այժմ արդիւնագործական կեանքը համարեա բոլորովին կանց է առնել: Կան մի քանի արհեստանոցներ, գործարաններ և ջուրհականացներ, որոնց մեծ մասը հիմնել է Ամերիկեան

պատամառայց կոմիտէն՝ արտեղործական հիմունքներով: Բայց դրանք իրենց շնչին չափերով և պակասարութեամբ չեն կարողանում բաւարարութիւն տալ շուկայի նւազողոյն և ամենապարզ պահանջներին անգամ: Իսկ արտաքին աշխարհը փակ է Հայաստանի համար: Ժողովուրդը տապալկւում է իւր սեփական իւզի մէջ: ձկան նման գորնւում ստուգապատին, էլի էրկիրն տապալկւում: Իւրաքանչիւր փորձ՝ անելու և գնելու այն, ինչ որ հնարաւոր է՝ նախապէս գտաւարւած է անյաջողութեան: Հում նիւթերն ու հարստութիւնը թալանւում են, երկրից դուրս տանւում, առանց ներմուծելու: Նրանց էկզիպլենտը—Ճանապարհին՝ հալչում է ձիւնի նման: Իսկ եթէ ստացւում էլ է, սպեկուլյանցիայի առարկայ է դառնում: պարզապէս՝ գները սար են բարձրանում, գիւղի և քաղաքի ժողովրդական լայն զանգամները համար անմատչելի դառնում: Այն ինչ շնորհիւ դաղթականութեան, գիւղատնտեսութեան քայքայման, Վրաստանի և Ազրբեջանի սղգայնացման՝ աշխատանք վաճառողների թիւը քաղաքներում բազմապատկւել, տասնապատկւել է: Պետական բազմաօլտակած հիմնարկութիւնները, երկաթուղային ծառայողների նոր կոմպլեկտացիան՝ հարկան երկրներէից բաշել բերել են Հայաստան բազմաթիւ ծառայողներ և բարդ աշխատանքի բանւորներ: Այդպիսով ոչ միայն բազմացել է աշխատաւորական սպառողների թիւը, այլ և խտացել է բանւորական շուկան: Մի կողմից բանւորական ուժի պահանջի անբաժնեալութիւն, իսկ միւս կողմից նոյն ուժի ասաջարկի անբնական աճում: մի կողմից մրցումն աշխատանք որոնողների միջև, իսկ միւս կողմից կեանքի թանկութեան հսկայական առաջխաղացում: մի կողմից բանւորութեան և ընդհանրապէս աշխատանքի ուժի վաճառմամբ

ապրողների անդիտակից և անկազմակերպ վիճակ, իսկ միւս կողմից կառավարութեան ընկալան անտարբերութիւն զէպի երկրի այդ խորիմ գաւակները—անա հա-
կատութիւններ, որ ծայրահեղ ողորմելի աւ թշուա կա-
ցութիւն են ստեղծել քաղաքի աշխատաւորութեան հա-
մար: Մեր բանաւորութիւնը միջին թւով ստանում է
ամսական 500—600 րուբլի, իսկ գաւառում աշխատա-
վարձը մարդկային գոյութեան ծաղրանքի չափ չնչին
է 8—10 րուբ. օրական, այն էլ 10—12 ժամայ աշ-
խատանքի համար: Եւ այդ չնչին, ողորմելի աշխա-
տավարձով բանուորը, ընտանիքատէր, բայց ընչազուրկ
բանուորը պէտք է ապրէ ներկայ պայմաններում, երբ
միայն հացի գրւանքան արժէ 15—18 րուբլի: Դա ոչ
թէ վարձ է, որով բանուորը պէտք է ապրէ, այլ մի
միջոց, որ նրա օրգանիզմը քայքայման՝ մահւան պրո-
ցեսը կատարելի դանդաղ: Մեռնում է ոչ միայն գիւ-
ղացին, այլ և բանուորը: մեռնում է իսկական ժողո-
վուրդը: Մերից ազատւածը մեռնում է սովից: Որքան
կեղծ է հնչում մարդկանց մտահոգութիւնը, որ ուզում
են փրկել ժողովուրդը արի հարւածների մահից, որ-
պէսզի յանձնեն նրան սովի տանջալից մահին...

Այդպէս՝ Հայաստանի ժողովրդի ամբողջ կեանքը
վերջապատ է, ժահրակալած: Նրա ամբողջ օրգանիզմը
հիւանդ է, հոգեւորքի մէջ, Այդ պայմանների մէջ ժո-
ղովուրդը չէ կարող նրկար ապրել: Այդ դրութեան մէջ
հիւանդ օրգանիզմը չէ կարող երկար գոյութիւն ու-
նենալ: Ոչ որ չէ կուրանում այն արտաոց փաստի առ-
ջն, անտես չէ առնում այն: Թէ հայ իշխող և հարուստ
դասակարգի ներկայացուցիչները՝ յանձնաւ այսպէս կոչ-
ւած ժողովրդական կուսակցութեան և թէ մահմե-
դական իւանների ու փաշաների վարձկան ապենտները,

թէ երկրի ազգային չինտիկութիւնը՝ յանձնաւ այս-
պէս կոչւած այնպիսիական Դաշնակցութեան և թէ
հայ ու թուրք յեղինգուկ, բանականութիւնը կորցրած,
կեղծ հայրենասիրութեամբ, վայրենի ազգասիրութեամբ
հարցած մտաւորականները կարծք են ձեռնում, կոկոր-
դիլոտեան արցունք թափում հայ-սարապանները հայ
ժողովրդի ոչնչացման, թուրք սարապանները թուրք
ժողովրդի մահին, սակայն իրենց դասակարգային քա-
ղաքականութեամբ, հակաժողովրդական գործնականի-
պով ժողովրդին տանում են դէպի վերջնական մահը:
Պէտք է բռնակ օրգանիզմը, անդամաւորութեան եւ-
թարկէ նրան, արմատախիլ անել սարկոմային այն
հիւղիքը, որ տարածւում և ցանցով պատում են նրան
մեռւած հիւժում նրա կենսունակ ուժերը: Պէտք է վր-
էն ժողովուրդը կորստեան անդունդից, բնաջնջման
ուրաւակից, որ իւր սե ու մահաշունչ թեերը տարա-
ծել է Հայաստանի ժողովուրդներին լայն և ընդարձակ
խառէրի վրայ:

II.

ԱՐՏԱՅԻՆ ՊՍՏՃԱՌՆԵՐԸ

Ինչի՞ հետեւանք է Հայաստանի աստապեալ ժողո-
վուրդի այդ դժոխային դրութիւնը:

Պափաղանց սարսփնակ կլինէր և մարդկային
մարքի համար անընթերցելի, եթէ մի ազգային տնօրի-
նակ և ազազակոյ կացութիւն բոլրած լինէր մարդ-
կանց շար ցանկութիւնից, այս կամ այն խմբակցու-
թեան՝ կուսակցութեան՝ գիտակցական կամքից: Եթէ
գործող մարդկանց կամքից և ցանկութիւնից դուրս
գոյութիւն չունենային արտաքին պայմաններ՝ հազիւ թէ

ամենաներսական Ժանքերն ու հզօրագոյն ձգտումներն
անգամ կարգանային ստեղծել նման ստեղծի կացո-
թիւն: Ղեկավարող կուսակցութիւնները միայն օժան-
դակիչ են հանդիսացել արտաքին պայմաններին, կիանք
են աւել արանց ներսում, կամք ներքնայն՝ առանց հա-
կանալու և հաշի առնելու ժամանակակից ընդհանուր
կեանքի օրինակով: Ընթացքի առաջադէմ, այդ պայ-
մանները չլատող, չհզարացնող սեփականացը: Եւ այդ
չափով նրանք պատասխանատու են մասնայի և պատ-
մութեան առջի:

Բանտարական գիտութեամբ՝ մարքսիզմով առաջ-
նորդող սոցիալիստները, որք իրենց գործելակերպը
միշտ հիմնում են կեանքի օրինակով աւելանքի վրայ,
դեռ պատերազմից առաջ մասնանշում և ապացուցում
էին այն, որ կապիտալիստական աշխարհը իւր գա-
ղացման պրոցեսում թեւեղիսել է մի աւելի բարձր
շրջան՝ իմպերիալիստական շրջանը: Կապիտալիստա-
կան արտադրութեան հիմքը կազմում է ազատ մրցումը՝
կոնկուրենցիան: Սակայն այդ մրցման հետեանքները
արդիւնագործութեան անընդհատ աճուճը և արտա-
դրութեան կենտրոնացման՝ կոնցենտրացիայի աւելի ու
աւելի խորացող ընթացքը հետզհետեւ սկսել են բացա-
ւել մրցումը և հաստատել են չմենաշնորհ՝ մոնոպոլիա:
Ոչ միայն արդիւնագործութեան փոխանցն ձեռքի խո-
շոր ձեռնարկութիւնն է կլանում մանր ձեռնարկու-
թիւններին, այլ զանազան ճիւղեր միանում՝ որոշ կամ-
քինացիայով կազմում են մի հսկայական ձեռնարկու-
թիւն (արտասանք, սինդիկատներ և այլն): Միեւնոյն
ժամանակ արդիւնագործական կապիտալը, որ անբա-
ժան իշխում էր արտադրութեան վեջ, տեղի է տալի
Ֆինանսական կապիտալին: Այժմ արտադրութեան տէր

ու տիրականը ոչ թէ արդիւնագործական կապիտա-
լիստներ են, այլ բանկերը, որ միջնորդի գեր կառա-
րելուց դարձել են տիրական մոնոպոլիստներ, որանք
պահում են իրենց ձեռքերում աւելի և մի շարք ուրիշ
երկրների բոլոր կապիտալիստների և մանր աւելների
գրամական կապիտալները, ինչպէս նաեւ արտադրու-
թեան միջոցների խոշորագոյն մասը և նաեւ նիւթերի
ազդերները: (Լենին «Մոպերիալիզմ»-ի Այդպիսով ար-
տադրութեան, ամբողջ տնտեսական (հետեւապէս նաեւ
բազմապէս) կեանքի տէրն ու տիրականը դարձել
գրամական կապիտալը՝ փերափոխւած արդիւնագործու-
կան կապիտալին՝ ֆինանսական կապիտալը: (Հիւֆեր-
դինգ «Ֆինանսական կապիտալը»):

Ֆինանսական կապիտալը աւելի ու աւելի է խո-
րացել արտադրումեան եւ իւրացման նախասովիներ,
հակասութիւն, որ կազմում է բուրժուական հասարա-
կութեան հիմնական բնոյթագիծը: Մրցման վերացու-
մը, արդիւնագործութեան մոնոպոլիզացիան, բանկերի
կենտրոնացումը լայն և ընդարձակ չափերի են հասցրել
արտադրութեան հասարակականացումը՝ սոցիալիզա-
ցիան, այնինչ իւրացումը աւելի ու ավելի մնացել է մասնա-
ւոր Այդպիսով ֆինանսական կապիտալիզմը (իմպե-
րիալիզմը) ստեղծել է սոցիալիզմի իրականացման
օրենսդրական պայմանները:

Ֆինանսական կապիտալը հիմնական փոփոխու-
թեան է ենթարկել նաեւ ազգերի փոխաբարբերութիւն-
ները: Այսպէս կոչւած բազմալեզու պետութեան առա-
ջացումը կազմում էր երիտասարդ կապիտալիզմի ինք-
նանպատակը: Արտադրութեան կապիտալիստական սի-
տեմն գորդացման համար պահանջում էր պետական
աւանտանքով ապահովւած բազմալեզու շուկայ, որ

6444-2004-1006
27402

կապիտալը ազատ ու համարձակ կարող էր գործել առանց վախճանալու արտաքին կոնկուրենցիայից, ուշիկ ազգերի կապիտալի մրցումից: Ծիշա է, արդիւնագործութեան զարգացմամբ և կապիտալների կուտակմամբ ազգային շուկան այլևս չէր քառաբարուն և պետական սահմաններից դուրս նոր շուկաների կարիքը ծառանում էր կապիտալի առջև. սակայն կուտական շուկաների պրաուումը տեղի էր ունենում ազգային կապիտալների ազատ մրցման միջոցով: Ֆինանսական կապիտալիզմը ձգտում է այդ ասպարիպում հր մրցումը վախճարին: մանուկության, ձգտում է իւր միանեծան իշխանութեան ենթարկել, իւր «ազգեցութեան սփերայի» մէջ աւելի անտեսապէս յետամնաց, գիւլտանտեսակտն և արհեստային կենցաղ ունեցող երկիրներ: Ազգային պետութիւնը դառնում է իմպերիալիստական պետութիւն, այսինքն այնպիսի պետութիւն, որը կապիտալիստների օգուտը բազմապատկելու, կեդրումն ընդլայնելու համար ձգտում է ընդարձակել իւր տերիտորիան, նաեւ նոր երկիրներ, տիրանալ նոր ժողովրդների վրայ: Ազգային կապիտալիստների միջև առաջ է գալիս շահերի բազիումն և զինումը ընդհարումների անխուսափելի վտանգը:

Բազարակրթում աշխարհի հասարակութիւնների պատմութեան այդ օրինակաւ տեսչենցի վրայ հիմնած: սպիտակաւոր սոսկումով էին զբաղւում ընդհանուր զինման մանիան, մասսայական արիւնհեղութեան և աւերումների գործիքների ցաղմապատկումն ու կատաշեղագործումը և նախատեսում էին համաշխարհային տրիտանեղ և աւերիչ պատերազմ: Քրիստոնէական մարդասիրութիւնը կամ բարոյագիտական բնագանցական բարձր գաղափարները չէին, որ ստիպում էին հետեւողական սոցիալիստներին մարքի ամբողջ կորովով, ե-

ռանդր ամբողջ թափով պայքարել համաժողովային ջարդի վտանգի դէմ, այլ այն մասնագութիւնը, որ այդ ընդհանուր ժխորի ժամանակ սոցիալիստական պայքարը կը զժեարանայ, կը բարդանայ և այդ պայքարի վախճանական նպատակի իրագործման ուղին կնթանայ բազմաթիւ զոհերի վրայով, առատահոս արեան միջով: Եւ բոլոր երկրների սոցիալիստները պատրաստ էին ամենավճռական միջոցների դիմելու. եթէ միջազգային իմպերիալիստական բուրժուազիան համարձակէր հրդեհել աշխարհը: Այդ իմաստով էլ Բազելի միջազգային սոցիալիստական կոնգրեսը (նոյեմբեր 1912 թ.) որոշում է. «Այն դէպքում, եթէ պատերազմն այնուամենայնիւ բռնկէ, սոցիալիստները պարտաւոր են միջամտել՝ նրան արագօրէն վերջ տալու և գերազանցօրէն օգտագործելու պատերազմից առաջացած տրնտեսական և քաղաքական ճգնաժամը, որպէսզի ոտքի ելցնեն ժողովուրդներն և աշխարհով արագացնեն կապիտալի տիրապետութեան անկումը»:

Բազելի կոնգրեսից անցնում է տարի ու կէս միայն և մարդկութեան զլխին պայթում է երկինքը: Ժողովուրդները թափւում են միջազգային իմպերիալիստների հիւսած թախարդի մէջ, իրար կոտորում, իրար յօշոտում, աշխարհը դարձնում սպանդանոց, ամբողջ երկրագունդը ծածկում արիւնով, աւերում երկիրներ, կործանում տասնեակ տարիների աշխատանքի կոթողներ, ոչնչացնում արտադրութեան միջոցներ, արտադրական ուժեր, ենթարկում մարդկութիւնը քաղցի ու անօթութեան, մերկութեան, տնանկութեան, տեղահանութեան: Չորս երկար ու ձիգ տարիներ տեկ պայտակալի արիւնհեղութիւնն և աւերածութիւնը: Մարդկանց միտքն ու գիտակցութիւնը կաշկանդւել էր մար-

դակեր իմպերիալիստների թունալից գաւերով, հարբել նրանց կեղծ ու խաբերայ յայտարարութիւններով: Պէտք էր ունենալ պայծառ գիտակցութիւն, ուժեղ կամք, մարմնացած դասակարգային ըմբռնողութիւն, նեարգերի հսկայական ամբուլթիւն, որպէսզի չհնթարկուի զգացմունքներին, տպաւորութիւններին, սրտի ձայնին: Այդ առաւելան հոգեբանութիւնից զուրկ էին, ըստ երևոյթին, սոցիալիստների խոշորագոյն մասն և այդ պատճառով էլ չկարողացան մտքի ընդհանուր քառասի, տրամադրութիւնների ընդհանուր վակխանալիայի, խաբերայութեան համատարած մշուշի մէջ առաջ տանել իրենց իսկ ընդունած և պարտադրած սրոշումն և իմպերիալիստական Ֆրոնտի դիմաց ծառայեն մի ընդհանուր սոցիալիստական Ֆրոնտ:

Մտքի հսկայական ուժ, յիզափոխական կամքի անօրինակ թափ, եզակի հերոսական վճռականութիւն ցոյց աւելն միմիայն ոռւս սոցիալիստները՝ յանձինս կոմունիստների՝ քոլշեւիկների: Հոկտեմբերեան յեղաշրջման խորունկ ակտով նրանք ցցեցին իմպերիալիստական պատերազմի կրծքին բանտրա-գիւղացիական անխնայ սուրբ, պատուեցին համամարդկային պատմութեան ընթացքը և կոչ արին մարդկութեան կեղեքող ու շահագործող տարրերին, տառապող ու ճնշող ժողովրդներին, ոտքի ելնել իրենց դարաւոր ստրկութեան շղթաները ջախջախելու և սոցիալիստական նոր հասարակարգ կառուցելու: Բանտրա-գիւղացիական այդ յիզափոխութիւնն իրագործեց այն, ինչի վրայ մասնաւորում էին մարդկային սոցիալական կեանքի ժամանակակից ընթացքի օրինելու աւելաները: Նա ծածանեց նամաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան ալ կարմիր դրօշակը, պատուեց իմպերիալիստական կռաւիցիանե-

քի ռազմաճակատն և ստեղծեց երկու միջազգային բանակ: Մի կողմից իմպերիալիստների ֆինանսական կապիտալի բանակը, որ բոլոր միջոցների դրժագրութեամբ ձգտում է ոչ միայն անասան պահել իւր տիրապետութիւնը, կանգուն պահել խոշոր սեփականութեան, մասնաւոր իւրացման, արցունքի ու արեան վրայ հիմնած հասարակարգը, այլ և հասնել իւր գոյութեան նպատակին, աշխարհակալական պատերազմի իդէալին—նույնը նոր երկրներ, ձեռք բերելագղեցութեան նոր շրջաններ: Միւս կողմից սոցիալիստների՝ աշխատանքի բանակը, որ ուղում է վերացնել խոշոր սեփականատիրութիւնը, տապալել բուրժուական, իմպերիալիստական հասարակարգն և նրա բեկորների վրայ հաստատել իշխող և իրաւագուրկ ժողովրդի տիրապետութիւնը, կառուցել սոցիալիստական հասարակարգ, հաստատել հասարակ ու արդար յարաբերութիւններ ժողովուրդների միջև: Իմպերիալիզմ եւ սոցիալիզմ—անա այն երկու հակադիր և թշնամի բանակները, որ հոկտեմբերեան յեղափոխութիւնից սկսած կեանքի ու մահի պայքար են մղում:

Իմպերիալիստական աշխարհը շահագրգռած է յետամնաց երկրներով, քաղաքակրթութեան ցածր աստիճանի վրայ դնելով, քաղաքականապէս տհաս, ստրկական լծին ընտելացած, իրաւագիտակցութիւնից զուրկ եզան համբերութիւն և անտարբերութիւն ունեցող, մանր և թույլ ժողովրդներով: Չէ որ զրանք նրա աշխարհակալական և տիրապետական տենչանքի օրիններն են կազմում: Իսկ սոցիալիստական աշխարհը շահագրգռած է դրանցով այն չափով, ինչ չափով որ նա ոտնահարած երկրների և տառապող, շահագործող, չարքաշ կեանքի մատնւած, քրտինքի ու արեան դա-

տապաւորուած ժողովրդներ ընտկան պաշտպանն է և ազատագրութեան ջատագովը:

Հայաստանն այդպիսի երկրներից մէկն է. հայ ժողովուրդն այդպիսի ժողովուրդներից մէկը: Գիշատիչ իմպերիալիստները նայում էին Հայաստանի վրայ, որպէս մի իւրոտ պատառի: Տաճկական զինուորական իմպերիալիզմը ձգտում էր ամբողջապէս կլանել Հայաստանը, բնաջինջ անել հայ ժողովուրդը և անվրդով տիրանալ հայ արեան ծովի վրայ: Ռուսական բռնապետական կազետական իմպերիալիզմը նոյնպէս ձգտում էր իւր ծանր թաթը դնել Արարատի անդի Հայաստանի վրայ ևս և բացել այնտեղից նոր աշխարհակալական հորիզոններ: Անգլիական և գերմանական կապիտալիստական իմպերիալիզմն իրենց հերթին տեսնում էին Հայաստանի բարձրամակնայնությունն ոչ միայն սպառողական շուկաներ, ոչ միայն հում նիւթերի անյատակ ամբարներ և կապիտալների գործադրութեան ընդարձակ վայրեր, այլ և շքեղ բազաներ՝ իրենց աշխարհակալութեան պաշտպանութեան և առաջխաղացութեան համար: Միայն սոցիալիստական Ռուսաստանն էր, որ անշահ ընդունում էր այդ դժբախտ երկրի բազմատանջ, արնաքամ, դաբեր շարունակ շղթալիկալ ժողովրդի վերջնական ազատագրութեան անհրաժեշտութիւնը: Եւ բանւորա-գիւղացիական Ռուսաստանի Խորհրդային իշխանութիւնն ի լուր ամբողջ աշխարհի յայտարարեց ռուսական իմպերիալիստների տենչանքը Հայաստանի նկատմամբ վերացած, առաջադրեց նրա ինքնորոշման սրբազան իրաւունքը և կոչ արեց հայ ժողովրդական մասնակցին՝ իւր բախտը իւր ազատ գոյութիւնն առնել իւր սեփական ձեռքը և հերոսաբար պաշտպանել իւր ազատ գոյութիւնը:

Գերմանո-տաճկական իմպերիալիզմը սակայն, ոգևորւած իւր ժամանակաւոր յաղթանակով, դարձնում է ինչպէս Անգլիոյական, այնպէս էլ Հայաստանն իւր գաղութը: Տաճկական իմպերիալիզմն Եւրոպական իմպերիալիզմից տարբերւում է նրանով, որ նա գերազանցօրէն զինուորական է և որպէս այդպիսին՝ նա ոչ թէ հետզհետէ է քամում նւաճած, բռնագրաւած երկրի հիւթերը, կաթիլ-կաթիլ ծծում ժողովրդի արիւնը և որոշ չափով օգնում երկրի տնտեսութիւնը պահպանելուն, ոչ, տաճկական իմպերիալիզմը թալանի և աւերածութեան, ջարդի և կոտորածի է մասնում երկիրը հենց առաջին մոմենտից: Հայաստանի հողն ոռոգւում է արիւնով, գաշտերն ու ձորերը ծածկւում զիալներով: Հարիւր հազարաւոր կին ու երեխաներ տեղահան են լինում և մերկ ու սոված ապաստան որոնում զանազան, նոյնիսկ հեռաւոր տեղերում: Թալանչիները հաւաքում ասնում են ոչ միայն բարեկեցութեան և շքեղութեան իրերն ու առարկաները, այլ և ամենավերջին հացահատիկն ու անասունը: Քանգում տանում են ոչ միայն հանրային շինութիւնների հեշտատար մասերն, այլ և մասնաւոր տները կան ու կարասիքը, ծածկոցն ու փեղկերը: Երկիրն ամբողջապէս աւերւում, թալանւում է և ծայր աղքատութեան մատնւում...

Այդ իմպերիալիստական ժանդախտին հետևում է իմպերիալիստական օծը, որ թունաւորում է Հայաստանի ժողովրդի դասակարգային զիտակցութիւնը, չեղով պատմում նրա ազատագրական կամքը:

Միջազգային խարդախ ու նենգամիտ իմպերիալիստների երեք աստուծներից մէկը՝ Վուդրօ Վիլսոն, յայտարարում է, որ ոչ մի ժողովուրդ չէ կարող՝ որպէս առարկայ՝ մի պետութիւնից յանձնել մի ուրիշ

պետութեան: Թշնամի իմպերիալիստական բանակի նկատմամբ խստութեամբ պահանջող և գործադրող այդ Ֆրազային սկզբունքն անկիրառելի է դառնում անգլո-Ֆրանսո-ամերիկեան իմպերիալիզմի համար: Եւ Հայաստանի ժողովուրդն՝ իրօք որպէս առարկայ, յանձնւում է անդլիական խարդախ աշխարհակալներին: Հիւժւած, քամւած, աւերած երկիրն այնքան էլ չէ հետաքրքրում անգլիական ոսկետէրերին: Որպէս արնատեսական գաղութ՝ Հայաստանն այսօր արժէք չունի գաղութներով հարուստ Անգլիայի համար: Հայաստանի աշխարհագրական դիրքն է, որ նա կարող է օգտագործել իւր գաղութային գործերը շտկելու նպատակով: Հայաստանի բարձրունքների վրայ թառած, իր նախկին ախոյեանի՝ Միլիկովեան Ռուսաստանի ծայրագաւառում (գաղութում) նստած՝ նա գիտում և ուշի ուշով հետևում է տիեզերական իմպերիալիստների արևելեան քաղաքականութեան ելևէջներին և ըստ այնմ գաղտնագողի առաջ տանում իւր ստոր ու նենգ քաղաքականութիւնն Արևելքում:

Հայաստանն և ամբողջ Անդրկովկասը հարկաւոր է միջազգային իմպերիալիստների դատն իւր ձեռքն առած Անգլիային իւր սխերիմ թշնամու Լենինեան Ռուսաստանի՝ որպէս խորհրդային իշխանութեան գաղափարի մարմնացած վայրի գէժ թփակրդներ լարելու համար. Այդ սեղ, Անդրկովկասում, նա պիտի ունենայ հաւատարիմ գամփոններ, որպէսզի թոյլ չտայ խորհրդային իշխանութեան համաշխարհային յեղափոփութեան գաղափարը մոտեք գործելու Արևելք, ուր Անգլիան ունի խոշոր կենսական շահեր: Արևելքը միշտ եղել է Եւրոպայի, մասնաւորապէս Անգլիայի ստրուկը: Արևելեան ժողովուրդները, մասնաւորապէս հնդկականը

ժողուց ի վեր տառապում են երոպական իմպերիալիզմի գաղութային քաղաքականութեան ծանր լծի տակ: Նրանց դառը քրտինքն ոսկիների վերածելով՝ հասում գնում է երոպական աւաղակների գրպանը, իսկ նրանք՝ այդ ժողովուրդները տարրական իրունքներէրից զուրկ, տնքում են օտար վարչութեան անսիրտ ու բարբարոս ճնշումների տակ: Ստրուկներ յայդ աշխարհում Շահաւանականութեամբ կարող է պարարտ հող գտնել ժողովուրդների ազատագրութեան կոչը, որ կարմիր տառերով գրւած է սոցիալիստական կուլի դրօշի վրայ: Հարիւրաւոր միլիոն ստրուկների ապստամբութիւնը: աշխարհակալների դէմ մահացու հարւած կը հասցնէ իմպերիալիստական բանակին և դէպի սոցիալիստական բանակը կը հրէ Եւրոպայի բանւորական արիստոկրատիային, որը տակաւին հետևում է ժողովրդական լայն մասսաներից երես գալձած դաւաճան Հնդկստաններին և կաշառում է գաղութների շահագործումից յրդփացած կապիտալիստների ճոխ սեղանի փշրանքներով: Գաղութների ապստամբութեան վտանգն է, որ այժմ մտահոգութիւն է պատճառում Անգլիային՝ այլ ոչ թէ այն, որ Հնդկաստանին կարող է սպառնայ մի այլ իմպերիալիստական պետութիւն: Իմպերիալիստական Ռուսաստանի ողնշացմամբ, Բաղդադի երկաթուղու խելով, գերմանական իմպերիալիստների ազդեցութիւնը Տաճապտանում վերացնելով և Պարսկաստանն ամբողջապէս իւր թաթերի մէջ գցելով, նա այլևս ապահովել է իւր գերիշխանութիւնն Արևելքում և միահեծան տիրապետութիւնը Հնդկաստանի վրայ:

Սակայն կայ երկու այլ վտանգ ևս, որ կարող է այդ տիրապետութեանն անուղղելի հարւածներ հասցնել, Դա նախ՝ Միլիկովեան Ռուսաստանի վերականգնումն

է և երկրորդ՝ հակաանգլիական պրոպագանդի յաջողութիւնը մահմեդական աշխարհում: Ահա այդ վասնզը կասեցնելու համար է, որ Անգլիան ձգտում է Հայաստանը դարձնել իր բաղան:

Դեռ պատերազմի առաջին կիսամեակի վերջերին, այն ժամանակ, երբ դաշնակիցները կուրծք էին ծեծում գերահաւատներին հաւատացնելու. որ իրենց բարեկամութիւնը մշտեմքնաւոր է ու յաւիտեանական, անկեղծ է ու անշտ, Թեհրանի անգլիական դեսպանը պարսկական կառավարութեան ներկայացուցչի հետ ունեցած իւր տեսակցութեան ժամանակ պարզօրէն և առանց վարանման յայտնում է հետեւեալը. «Անգլիան Ռուսաստանի հետ ունեցած իւր աշխատան համաձայնութեան վրայ նայում է որպէս կարճատև մերձեցման, որը կարող է իւրաքանչիւր տեսալ մոճենաին տեղի տալ առաջաթշնամութեան (Персидская зеленая книга): Անգլիական իմպերիալիստական կառավարութեան տրամադրութիւնը և նրա քաղաքականութեան ուղղութիւնն արտայայտող այդ արտայայտութիւնը, ճիշտ է, արեւծ է այն ժամանակ, երբ ցարական Ռուսաստանը դեռ կանգուն էր, և Պարսկաստանը հեծում էր երկու հսկաների՝ Ռուսաստանի և Անգլիայի մրցման կրկնակի ճնշման տակ: Բայց նա ճշմարիտ է և՛ այսօր, երբ ռուս յեղափոխական բանւորութիւնն և գերդասցիութիւնը փրկել են պարսից երկիրը Մորոզափների շահագործումից և Լեւիոնիքների սերնդից, և երբ այդ զգախտ երկրի վրայ հաստատուել է անգլիական պրոտեկտորատ: Հզօր իմպերիալիստական Ռուսաստան ստեղծելու ցանկութիւնը չէ, որ ստիպում է Անգլիային խոշոր զոհողութիւններով օգնել ազնւական-բուրժուական Ռուսաստանի հակաժողովրդական սեռ ռեժիմին պատերազմելու սո-

ցիալիստական բանուորա-գիւղացիական Ռուսաստանի
զեմ, ոչ. այլ իւր սեփական և միջազգային իմպերիա-
լիզմը փրկելու և կանգուն պահելու հոգսը: Եւ եթէ մի
կոյր և կարճատես «Յառաջ» անհեթեթ և մտածածին
սեղեկութիւնների հիման վրայ՝ սրտի անհուն բերկրու-
թեամբ դուշալում է Խորհրդային Ռուսաստանի շու-
տափոյտ անկումն, առանց հաշի առնելու թէ ինչ ող-
բերդական հետեանք կունենայ այդ Հայաստանի համար,
ապա աչքաբաց ու հեռատես անգլիական իմպերիալիստ-
ները շատ լաւ են հասկանում, որ Խորհրդային Ռու-
սաստանի ցանկալի ջախջախումը կարող է յարութիւն
տալ իմպերիալիստական Ռուսաստանի ուրեականին: Եւ
այժմեանից իսկ նրանք տանում են այդպիսի զիծ, որով
վաղւայ իմպերիալիստական Ռուսաստանը, որոշ շրջա-
նակի մէջ դրած և անգլիական արեւելեան դադութ-
ներից հեռու պահւած լինի: Զրաւականանալով նրանով,
որ իրենք մշնմնակ, թաղուն ու գոգունի կերպով կերան
Պարսկաստանի գլուխը՝ հակառակ իրենց իսկ խոստման՝
թէ «Անգլիան ձգտում է ստեղծել ուժեղ և հզօր Պարս-
կաստան» (Персидская зеленая книга), նրանք ձգտում
են կարելութիւններ ստեղծել Անգրկովկասում և «աղ-
ղեցութեան շրջաններ» և ըստ կարիքին ուժեղ պատնէշ-
ներ հաստացել, իհարկէ՝ ի հաշիւ Հայաստանի: Եւ ահա
«փոքր դաշնակցի» անկախութեան պահանջով «վառ-
ւած», նրան իւր «անկեղծ հովանաւորութեան» տակ
առած, Անգրկովկասում «խաղաղութեան» և պաշտպա-
նանութեան միսիան չալակած՝ Անգլիան խաբդալի-
նարիկներ է լարում Հայաստանի ու Վրաստ նի, Հայ-
աստանի ու Ադրբեջանի միջեւ: Երկու դարաւոր հաշ-
տակների՝ հայերի և վրացիների միջեւ առաջացնում
է զինւած ընդհարում միմիայն նրա համար, որ յամենայն

զէպս ստեղծւի «չէղօք գօտի» առաջացու մ «սխեցեալ կողմին» նւիրաբերելու համար: Աւերած երկիրն աւելի ու աւելի է աւերուում, քաղցած ժողովուրդն աւելի ու աւելի է քաղցի մատնուում: Նա դրդում է Ադրբէջանին ամուր կաշել Ղարաբաղին և աչք տնկել Չանդեզուրի վրայ: Թոյլ է տալիս բէկութանական կառավարութեանը սրախողխող անել այն ժողովուրդը, որը ցանկանում է առայժմ ինքնուրոյն ապրել: Նա թոյլ է տալիս տաճիկ զօրքերին դանդաղ յետ քաշել զէպի իւր երկիրն և դատարկել Հայաստանը բոլոր կենսամթերքներից և սյգպիսով ժողովուրդը մատնում է ծայրայեղ կարօտութեան: Նա մատերի ար նքով է նայում և լուելան քաջայերում տաճիկ և ադրբէջանեան ազենտներին խռովութիւն և թշնամութիւն սերմանել հայ և թուրք ու քուրդ ժողովուրդների միջև, արխնալի ընդհարումներ առաջացնել նրանց միջև և այդպիսով անանկութեան, մահացութեան ու զաղթականութեան ուղին է նետում նրանց:

Սակայն Անգլիային պէտք է ուժեղ Ադրբէջան և այլ դիտաւորութեամբ: Անտանտայի առջև դրւած է ճաճկատանի խնդիրը: Եթէ մահմեդական այդ պետութիւնն իրօք տարրալուծւի, մահմեդական աշխարհը, որի կոշորագոյն մասն Անգլիայի գաղութներն են, խիստ պիտի դժգոհի և կարող է ոտքի կանգնել նրա դէմ: Եւ ահա անգլիական դիպլոմատիան հօղ է պատրաստում կանխելու այդ վտանգը: Բուրժուական-խանական ուժեղ Ադրբէջանով նա կարող է պատուել մահմեդական աշխարհում կազմելիք ընդհանուր ճակատը: Այդպիսով նա գէնք կուեննայ կուելու նաև սպառնացող Արևելեան յեղափոխութեան գէմ: Ադրբէջանին խնդրելու համար չէ՛ որ նա յանձնել է Կասպից ծովի նաւատորմի Պենի-

կինին, այլ նաև նրա համար, որպէսզի հենց Ադրբէջանն (ինչպէս նաև Պարսկաստանը) ապահովւած լինին բոլե-
պիեան «արշաւանքից» և երկրորդ՝ որպէսզի իւր ձեռքի տակ ունենայ մի ուրիշ ուժ՝ զէպերի այլ դատաւորութեան ատենին: Անգլիական քաղաքականութեան էութիւնն է՝ միշտ պատրաստ լինել на тотъ и на другой случай.

Այդ սկզբունքով է նա զեկավարւում և՛ տաճկական խնդրի նկատմամբ: Երբ հարկաւոր է իրեն հակառակ իմպերիալիստական կողմիցիային մահացու հարւած հասցնել անգլիական իմպերիալիստներն ոսկի սարեր էին խոստանում նաև հայ «ժողովրդին»: Պէտք է վերջ տալ մօտաւոր արևելքի հարցին, որ այնքան մեծ գլխացաւանք էր պատճառում մեծ պետութիւններին. պէտք է տարրալուծել սուլթանի երկիրն և առատօրէն վարձատրել «իօքրիկ դաշնակցին»-մեծարեւան, յորջորջում էին Անտանտայի ներկայացուցիչներն, երբ պատրաստւում էին Վերսալլ ուղեորւելու: Իսկ մեր քառակուսի գանգով էին նետում երկկնք: Բայց երբ գլխաւոր ատոյեանին գերեզման իջեցրին, երբ գայլի անորժակով նրանք մօտեցան «կնճոտ արևելեան հարցին» և երբ իմպերիալիստների նախկին շահերը կրկին բազխեցին, միայն աւելի բարդ կերպով և նոր սխառացիալով, նրանք սկսեցին յետույետ նահանջել: Արևելքի ապստամբութեան ուրաւականը, դամոկլեան սրի նման, կախել է Անտանտայի գլխին: Նա չէր կարող առանց այլևայլութեան ընդունել այն պարտամուրձակը, որ այնքան հեշտութեամբ տւել էր հայ «ժողովրդին» պատերազմի ընթացքում: Եւ Անգլիան, որ արեւելեան մահմեդականութեան խոշորագոյն մասին աէր ու տիրականն է, աւելի չուտ, աւելի չատ շահագորդւած է տաճկական հարցն օղը ցնդեցնելու:

Այնտեղ, Անգլիայում, աւելի ու աւելի է տարածուած ու խորանում այն կարծիքը, թէ «անգլիական քաղաքացիները» պարտաւոր են «թիւրք ժողովրդի վերաբերմամբ լոյալ քաղաքականութիւն վարել և աշխատել նրա հետ բարեկամական կապ հաստատել» (Է. Ատկին «Թայմզ» մէջ)։ Այն հրդեհը, որ կարող է բռնկել Արևելքում և կլանել իմպերիալիստական Արևմուտքը, մասնաւորապէս Անգլիան, կարելի է կասեցնել այդ հաշտարում բարեբախտաբար հեղինակութիւն և ազդեցութիւն ունեցող կրօնակից Տաճկաստանի կանաչ դրօշակն օգտագործելով։ «Տաճկաստանն—ասում են անգլիական քաղաքական գործիչները՝ Լոյզ Ջորջին աւած իրենց մի գրութեան մէջ—տակաւին վայելում է մուսուլման աշխարհի բոլոր համակրանքն, և նրա ոչնչացումը կարող է ուժեղ դժգոհութիւն առաջ բերել Արևելքում։ Անգլիան, նշպէս ասիական ուժեղ պետութիւն, աւելի քան պարտաւոր է այժմ հաշի առնել իսլամ պարագլուխների կարծիքները»։ Պէտք է, ուրեմն, սիրաշահել տաճիկ փաշաներին և էֆենդիներին, մուստաֆա քէմալներին և օկլաներին, վերստին կենքի կոչել այդ ոճրագործ ուժերը, վերականգնել նրանց զաղիր ու դաժան տիրապետութիւնը, վերահաստատել երկաթի ու արեան իշխանութիւնը։ Եթէ վերակենդանացնել և շահագորդել տաճիկ զինուորական իմպերիալիզմը նա անգնահատելի օգուտներ կրտայ ընդհանուր իմպերիալիստական ռազմաճակատին։ Նա ոչ միայն արմատում կը խեղդէ տաճիկ ժողովրդի տանջած և կեղեքած տարրերի խուլ դժգոհութիւնն ու բողոքն օտար և իւրային գիշատիչների դէմ, ոչ միայն արմատախիլ կանէ այն ծիրեն, որ արդէն սկսել են աճել՝ կոմունիստական տաճարին զոհաբերած Մուստաֆա Սուլէիլի*) և աւանդոտ

*) Գոհունակութեամբ կարող ենք ստուգել, որ ընկ. Մուստաֆա խին, Տաճկաստանի կոմունիստներից ամենանշա-

և ունակ ձեռքերով ցանած սոցիալիստական յեղափոխութեան սերմերից, ոչ միայն կը թուլացնէ պարսիկ, հնդիկ, աղան ժողովուրդների անգլիական աշխարհակալների դէմ մղած շարժումն, այլև մեծապէս կը նպաստէ սոցիալիստական-հակաիմպերիալիստական ռազմաճակատը կազմակերպող և ղեկավարող Սորճրգային Ռուսաստանին մահացու հարած հասցնելու։ Եւ դա մի հեշտ իրադրոճելի բան է, էրզրումում կենդրոնացած է Մուստաֆա Քէմալ փաշայի գորարանակր, Ռուսահայաստանի ինչպէս նաև Վրաստանի ու Ալբանիայի տարածութեան, վրայ կան բազմաթիւ օժանդակիչ ուժ։ Բէյլուֆ փաշան Ղարսի չրջանում, Նախիջևանի, Դարալագեհազի, Սուրմալի, Բաթումի, Գանձակի, Բաղւի, Ղարաբաղի, Ջանդեղուրի շրջաններում էներ թալաշաթի կուսակիցները՝ խան ու բէկերի վոճմակները։ Բուական է այդ արիւնարբու գաղանների, արեան ու կրակի սիրահար այդ աւազակների անորոշակի գրգռել և ամբողջ Անգլիովկալի և մասնաւորապէս Հայաստանի հողը կը ծածկի արեան գետերով ու դիակներով կոյտերով։ Իսկ Գենիկլինեան սպիտակ բանակի հետ զրանց գրկախառնելու հաւր ընդհանուր լնդու գանիք հարաւոր է և հեշտ։ Անտանման միամտութիւն կը լինէր կարծել, թէ Սանահնի, Ղարաբաղի, Նախիջևանի, Բոյսուկ-Վիդի, Ջանդեղուրի արիւնտ և աւերիչ ղեկավարը տեղի են ունեցել առանց անգլիա անգլիպոմախայի արնաթաթախ մասների։

Անգլիան իւր խարդախ քաղաքականութիւնը կիրառում է Հայաստանում մի ուրիշ նկատառումով։

Բանը նրանումն է, որ Փարիզի վեհաժողովն առաջարկաւ սպանած չէ։ Մուստաֆայով Գենիկլինեան զանգեղի գաղտնաւոր, նա զեռ կենդանի է և ետադրով առաջ է առնում իր կազմակերպչական և պրոպագանդիստական աշխատանքը։ Արեւելի լեզուախոսութեան համար։

Ժամ. խմբ.

կել է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին յանձն առնել Հայաստանի հովանաւորութիւնն, այսինքն դարձնել նրան Ամերիկայի գաղութը: Անգլիան առեւ թեւ համաձայնել է այդ անդուրեկան առաջարկի հետ: Բայց ստիպողական և հրամայական պահանջ է դրում ինտրիգներ լարել նրա դէմ, որպէսզի յօդս ցնդեցնէ այն: Միջազգային յարաբերութիւնների տիեզերական մակեր Վիլսոնի հայրենիքը, որը մինչև պատերազմին մասնակցելն անխնայ և առատօրէն քերթել է ամբողջ Եւրոպան, քամել վերջինիս ոսկիները, չէ կարող խորապէս շահնանգստացնել անգլիական իմպերիալիստներին: Անգլիան վճարում է Ամերիկային ամսական 37 միլիոն դոլար՝ որպէս իւր պարտքի տոկոսները: Պատերազմի չորսին՝ Ամերիկան հսկայական քայլերով առաջ է գնացել համաշխարհային ապրանքային փոխանակութեան առաքել դուռ: Եթէ պատերազմի նախօրեակին Միացեալ Նահանգների տոնաժը կազմում էր 4,5% ամբողջ աշխարհի տոնաժի, իսկ ծովային աւազակներ՝ Անգլիայինը 41,6%, ապա այժմ վերջինիս տոնաժն ընկել է մինչև 34%, այնինչ ռաւալինի տոնաժն, ընդհակառակը, բարձրացել է մինչև 25%՝ Եւրանիկները օրդան «Թայմս»-ը առատ արտասուք է թափում այն մասին, որ Անգլիայի առաջնութեանը վտանգ է սպառնում Ամերիկայի կողմից: Տնտեսական այդ դժբաղդը, բնականաբար, պէտք է առաջ բերէր և քաղաքական չզօրայում: Յիւրաքանչեւ, Ամերիկան փորձեր է անում սոնատակ տալու իւր իսկ Մոնրոէի սրբադորձած գոկտրինը: Եթէ այդ ալեղարդ գոկտրինը պահանջում է եւրոպական պետութիւններից չմիջամտել ամերիկեան գործերին, ապա ինքն Ամերիկան էլ չպիտի միջամտէ եւրոպական պետութիւնների գործերին: Այնինչ նա իւր կղզիացումից դուրս է գալիս, որ

հանդուրժելի (պիտի *), Եգիպտոսը յանդգնութիւն է ունեցել պատգամաւորութիւն ուղարկել Միացեալ Նահանգներին ինդրելու, որ սա անդուրեկի համարի Վերսայի որոշումը՝ Եգիպտոսի վրայ անգլիական հովանաւորութիւն վերհաստատելու վերաբերմամբ, Եւրոպիկեան սենատի արաւքին գործերի յանձնաժողովն ընդունել է, որ «Եգիպտոսը զիպտումաութօրէն չէ պատկանում ոչ Մեծ Բրիտանիային, ոչ էլ Տաճկաստանին, այլ ինքն իրեն»: Աւելի սոսկալին այն է, որ Ամերիկան մտածում է հիմնաւորել այնտեղ, ուր Եւրոպան և Ասիան հանդիպում են իրար, ուր Անգլիան կենսական խոշոր շահեր ունի: Հանդուրժել մի հարուստ և ուժեղ պետութեան հարեանութիւնն, այն էլ այնպիսի մի չքանութեան ուր նա վաղուց ի վեր ձգնում է իր մեծագույն տիրապետութիւնը հաստատելու՝ անկարելի է: Այդ պատճառով էլ նա՝ Անգլիան, ղեւաբութիւններ է յարուցում տոնական հարցը լուծելու, ինտրիգներ է սարքում Հայաստանի ամերիկական հովանաւորութեան մանդատի դէմ: Նա հեռացրել է իւր զօրքերն Անգլիովկասից, որպէսզի բարդութիւններ առաջանան այնտեղ և Հայաստանում, և ինքը հնարաւորութիւն ունենայ հարկաւոր դէպքում թաղցնել իւր նենդամիտ գլուխը, փաստաբանելով ուկային նրանով, որ անգրկովկասեան «անմիտ» էքսպեդիցիան իրեն նստել է, ըստ Լոյդ Զորջի, 30 միլիոն ֆունտ ստերլինգ, որ «Բրիտանիայի հպատակները չեն կարող լինել մարդկութեան ցեղի մի ամբողջ կէտի պաշտպան»:

*) Յիւսիսային իմպերիալիստների համար նոյնպէս ցանկալի չէ, որ ամերիկական ուժեղ կապիտալը ոտք կոխէ Տաճկաստան: Եթէ Ամերիկայում—ասում է Գովէն «Journal de Débats»-ում—պետական մարզիկ ուղում են մանդատ ստեղծել եւրոպական Տաճկաստանի վրայ՝ պէտք է տեսլ, որ սխալ ճանապարհի վրայ են կանգնած նրանք: Անհաւանական է սակայն, որ ամերիկացիները յանձն առնեն մի միսիայ, որ հակառակ է Մոնրոէի քղաքականին:

ները» („Դայլի Մայլ“): Նա, որ խնդրալիստական ջարդի ընթացքում և յաղթութեան մեղրամոխն զրգում էր հայ կապիտալիստների տիրապետական անորժակը, այժմ «խնթութուն» է համարում «Արսից մինչև Ալեքսանդրէտայի ծոցը հայկական հանրապետութիւն ստեղծելու առաջարկը», որովհետեւ «այդպիսի մի հսկայական տեր-րիտորիայի պաշտպանութեան համար հազիւ թէ բաւական լինին զաշխակիցների միջքանի կորպուսները» („Դայլի Մայլ“): Եթէ զրանով նա մի կողմից հասկացնել է ուզում Ամերիկային, որ այդ «հսկայական տերիտո-րիայի» հովանաւորութեան մանդատը չառ թանկ պիտի նստէ նրան, միւս կողմից էլ նա խորացնում է այն տա-տանութիւնները, որ նկատուում են Միացեալ Նահանգներում մանդատի նկատմամբ: Խոր քերկրանք զգալով «արժա-նահաւատ աղբիւրից» առած այն տեղեկութիւններից, որ «Միացեալ Նահանգների սենատն ևնթաղրում է թոյլ չտալ նախագահին յանձն առնել որեւէ պարտաւորութիւն Հայաստանի, Պոլսի կամ բնդհանրապէս որեւէ ուրիշ եր-կրի նկատմամբ» („Թայմս“), անգլիական հրէներն ամե-նաանամօթ կերպով և խնդրալիստական սառնասրտու-թեամբ յայտարարում են թէ „Եթէ Միացեալ Նահանգ-ները մտադիր չեն յանձն առնել Հայաստանի մանդատը, ապա որքան էլ սոսկալի լինի այդպիսի հեռանկար՝ հա-յերը պէտք է ընաջնջեն» („Դայլի Մայլ“):...

Ահա այն անդրիական իմպերիալիզմը, որի միջոցով հայ հակասոցիալիստական և այսպէս կոչւած «սոցիա-լիստական» կուսակցութիւնները, գլուխ ունենալով Դաշ-նակցութիւնը, ցզում էին փրկել հայ ժողովուրդը բնա-ջնջումից: Ահա այն գոյւած և իտաւարանած Անգլիան, որի խորգախ փաղարշանքները կուրորէն և միամտորէն վայելում էին նոյն կուսակցութիւնները Հայաստանի մո-

ղովուրդի արեան դնով: Ահա այն իմպերիալիզմը, որի ներկայացուցիչներին հրճանքով ու դժայրանքով հրա-ւիրեցին նոյն կուսակցութիւնները և զրկաբաց բն-դոնեցին Բագում, դաւաճանելով տեղական սոցիա-լիստական իշխանութեանը, որպէսզի իրքե թէ փրկեն հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը...

Ապա Հայաստանի արնաքամ և տառապոյ ժողո-վրդի բախան ընկնում է յաւախաղ Վիլսոնի պե-տութեան ձեռքը: Այդ երկիրն այսօր փաստօրէն նը-կատում է Ամերիկայի աշխարհակալ միջխաղատե-րիւրի ապաղայ զաղումը, թէև ճեւակամօրէն ճօճում է ամայի և փշտա տալածութեան մէջ: Ժողովուրդի դառ-րին լայն խաւերը դարկում են այդ փուշերին, ար-իւնտուում, բայց զիտակցութիւնից զուրկ երեխանե-րի նման խաբւում են մի բուռն թունալից հացահա-տիկով: Իսկ հայ բուրժուազիան, ինչպէս նաև մանր բուրժուական մտաւորականութիւնը, անձկութեամբ և ջիւղմեռանդութեամբ ապաւում են «Ամերիկայի ձեռ-քին», տեսնելով զրանով իրենց գասակարգային իդ-ձերի մարմնացումն: Այնինչ Ամերիկան չէ շտապում իւր այդ «սուրբ» ձեռքով ճաշակել տալու հայ կապի-տալիստներին լայն տիրապետութեան նշխարներ: Հասկնենք ու Հարբորդները բերանի մի կիսով քաղ-ցըր խոտառումներ են շտայում, իսկ միւս կիսով դառն ակնարկներ անում: Անգլիացիների Հայաստանի պարպ-ման վճռական մատապրութիւնը, որ յայտնի էր Ամե-րիկային տակաւին մաքաւ ամսին, ինչպէս անգլիական թերթերն են վկայում, Վիլսոնի հայրենիքի տէրերին մտահոգութիւն չէր պատճառում բոլորովին, թէև նը-չանց լաւ յայտնի էր նաև այն, որ տաճիկ զինուորա-կան իմպերիալիստները խոշոր զօրական ուժեր էին կենտրոնացրել արեւելեան Անատոլիայում և Երզրու-

մում: Իսկ երբ այդ մտադրութիւնն իրականանում էր՝ նրանք Թիֆլիսի ամերիկական նախկին հիւպատոսի բերանով յայտնում են կեղծ ցաւով և անտապառնացող տոնով թէ այուզմունքի ալիքը կը տարածէ բոլոր Միացեալ Նահանգները, եթէ ախտեղ իմանան, որ հայերը յանձնուած են ճակատագրի կամայականութեանը... Իրանով կարող են իզուց երկու մեծ անդլո-սաքսոնական ժողովրդների բարեկամական յարաբերութիւնները: Այդ սին յայտարարութիւնը քննու է անհետեւանք: Ամերիկական իմպերիալիստները քործակաւար Վիլսոնը զբաղւած է թւարանական բարդ հաշիւներով, որպէսզի չոր ու ցամաք թւերից պարզուի՝ թէ որքան ծախք կը պահանջէ կթան կովը և որքան եկամուտ կտայ նա իւր սիրեցեալ հայրենիքին:

III.

ՆԵՐՔԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայաստանը գիտակցութիւնից զուրկ, անշունչ մի իր չէ, յոյդերից և ցանկութիւններից, պահանջներից և ձգտումներից, փափագներից և իղձերից զուրկ ու մեռած հողագունդ չէ, որ երոպա-ամերիկական իմպերիալիստները ձեռքից ձեռք ձգեն նրան իրենց քմահաճոյքի համաձայն՝ առանց նրա կողմից որևէ հակադիմադրութեան: Հայաստանն ունի հասարակութիւն, ապրող և ձգտող համակենցութիւն, իւր շահերով հակամարտ, մտածելակերպով տարբեր, ձգտումներով հակադիր իմպակցութիւններ: Այդ երկրում և ընդհանրապէս Անդրկովկասում տեղի ունեցած անցքերը, օտար իմպերիալիստների պայքարը, այդ երկիրը նւաճելու, իրար մէջ բաժանելու մեքենայութիւնների կատարելի են ոչ թէ ասորիջկիան դատարկու-

թեան մէջ, այլ դիֆերենցիացիայի՝ շերտաւորման հնարակւած, դասակարգային ուրոյն կերպարանը ունեցող հասարակութեան մէջ: Ահա այդ դասակարգերը քաղաքական կաղծակերպութիւնների՝ կուսակցութիւնների կամքի և գիտակցութեան, գործակցութեան և հակագործակցութեան բովովն է, որ անցել է պատմութեան այն դասաւորումը, որ Հայաստանի ժողովրդին բերել հասցրել է ներկայ տոկալի կացութեանը, դժոխային զրութեանը:

Մենք տեսներ, որ մարդկային համաշխարհային կեանքն այսօր հոսում է երկու հակամարտ բեկումների անմիջական և սուր բաղիման, ընդհանրման բովով: Մի բեկուր կաղծում է հին, իւր դարն ապրած, ծերացած, սոցիալական կեանքի օրեկախ ընթացքը կաշկանդող, համաշխարհային արտագրական ուժերի զարգացումը բնագաւառող կեանքը, իսկ միւս բեկուր՝ նոր, իւր գոյութեան համար լայն փնտրող, մատաղահաս, սոցիալական կեանքի օրեկախ զարգացման հետ պրոգրեսի առաջընթացող, համաշխարհային արտագրական ուժերի զարգացման լայն ասպարէզ և ընդարձակ հետախուզումներ բացող կեանքը: Առաջին բեկուր արտայայտւել, հին, գերիզման իջնող կեանքի կրողը միջադպրոցին կապիտալիստներն են, իմպերիալիստական բուրժուազիան, իսկ երկրորդ բեկուր արտայայտւելը, նոր, լոյս օրոնող կեանքի ծիծեռնակները միջադպրոցին բանւորներն են, սոցիալիստական պրոլետարիատը: Տիրապետողների և տիրապետողների, ճնշողների և ճնշողների, շահագործողների և շահագործւողների ընդհանուր հաւի, բուրժուազիայի և պրոլետարիատի ամենուրեք կատարող սուր ընդհանրման, միջադպրոցին սոցիալիստական յեղափոխութեան քաղաքացիական ստիպողա-

կան պատերազմի դրօշն է, որ գործնականօրէն բարձրացրել է Ռուսաստանի անյաղթ բանուորութիւնը և Հոկտեմբերեան հերոսական մեծ ահառով ծածանել այն բանուորա-գիւղացիական պետութեան պիւսին:

Ռուս իմպերիալիստական բուրժուազիայի հետմիտան ստեղծ, սարսափահար է լինում նաև հայ բուրժուազիան: Սրա դասակարգային բնազդը կոտորած է իւր վայելալից սպասելիքներէ, քաղաքական տնտեսական տիրապետութեան երազներէ իրէլայնների դերն ելնելը: Գաղափարային միատեսակ շահերէ սրբազան օրհնութեամբ՝ ուսու կապիտալիստների հետ մշտնջենապէս ամուսնացած, Ռոմանովեան միապետականութեան տաջև ստորաքարը սողալով, նրանց աշխարհակալութեան մէջ իւր գրգանի սակիների աճուածք տեսնող հայ վաճառականներն ու վաճառողները փափագում էին տեսնել՝ որպէս ծնունդ համաշխարհային արիւնհեղութեան «ազատ» Հայաստան՝ ինչ գնով էր որ լինի: Թող սրի անցնի հայ ժողովուրդը, թող քնաջինջ լինի հայ գիւղացիութիւնը, թող սովից ու սրտից կոտորւի հայ բանուորութիւնը-միայն թէ ստեղծւի «անկախ» Հայաստան, որպէսզի այնտեղ իշխէ հայ բուրժուազիան, անյուր, աննախընթաց տնտեսական չահագործութեան և կեղեքման ենթարկէ Հայաստանում մնացած աշխատող մասսաներին: Հիւսիսային հզօր բռնակալ ժանգարմի արնաթաթախ փեշերի մի անկիւնի տակ մտած, ուսու բուրժուազիային ստոր լակեցական ծառայութիւն «մատուցելու պատրաստակամ հայ բուրժուազիան աղերսում էր «մարդկութեան պառմաթեան մէջ ամենամեծ թաղաւորող տոհմերից մէկին» (տես Գ. Դ. Мнацаканянъ «Разрѣшеніе армянскаго вопроса» էջ 35) ստեղծել մեծ և հսկայական Ռուսաս-

տանով շրջապատած «կիսանկախ» Հայաստան՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, գլուխ ունենալով մի արքայ՝ Ռոմանովեան տոհմից» (նոյն էջ 37): Ազատ և կիսանկախ Հայաստանը հայ «ժողովրդի» «պրեմիէ-րիան» է (հայ բուրժուազիայի իրենց Մնացականեանի արտայայտութիւնն է), մի «պրեմիէրիա», որ «կատարելապէս համապատասխանում է քաղաքակրթւած ժողովրդների բարոյական և կրօնական հայեցողութիւններին» (նոյն էջ 18): Սակայն ինչո՞ւ համար է ցանկանում հայ «ժողովուրդը» ունենալ «կիսանկախ» Հայաստան՝ բռնակալական Ռոմանովեան տոհմի թեւերի հովանու տակ, կազմաւորւած ամենակիր Ռուսաստանի հսկողութեամբ: Որպէսզի «լիակատար գարանտիա» լինի Հայաստանի սահմաններում ապրող բոլոր ժողովրդների՝ առանց խտրութեան նրանց ծագման և կրօնի՝ անկողմակալ և արդար վարչութեան» (նոյն էջ 36): Այսինքն՝ որպէսզի հայ կապիտալի իշխանութիւնը ստիկանական-ժանդարմիական սիւններով տարածւի և պահպանւի ամբողջ ժողովրդի վրայ և հաստատուն ու ապահով լինի նրա խոշոր եկամուտը: Որպէսզի հնարաւոր լինի թե ու թիկունք տալ ուսական արդիւնագործութեանը իւր մրցման մէջ և որպական արդիւնագործութեան հետ: Որպէսզի, կապած լինելով այդ՝ համեմատաբար թույլ ուսական արդիւնագործութեան հետ, հնար լինի ստեղծել սեփական, եւրոպական մրցումից ազատ, մոնոպոլիական արդիւնագործութիւն (էջ 23): Եւ որպիսի լայն հորիզոններ է բացում հզօր երկկլիսեան արձալ յաղթութիւնը հայ գիւղատիջ իմպերիալիստների համար: Գուշկոյների և Տերեշկենկոյների Ռուսաստանը տէր ու տիրական կը դառնայ եւրոպական Տաճկաստանի և Պոլսի, Բիւրզաստանի և Զուլամների

վրայ, կոնսենայ քաղաքականապէս և անասնապէս ստորուկ կիսանկախ Հայաստանը (էջ 7) և կատեգօէ Բիւր մեծ համաշխարհային առևտուրը Պարսկական ծոցի միջով Հնդկաստանի, Աւստրալիայի և Հնդկական ովկիանոսի բոլոր ափերի հետ: Պարսկաստանի վրայով կապելով այդ առևտուրը Կասպից ծովի հետ, Ռուսաստանը ձեռք կը բերէ մտքի համար անհասանելի առևտուր» (էջ 39): Իսկ չէ՞ որ Բնայերը ամենալաւ ներդաշնակութիւններն են ուս առևտրի և արդիւնգործութեան» (էջ 23): Զէ՞ որ «Պոլիսը նւաճելով, Ռուսաստանը, գտնէ առաջին հարկերամեակում պիտի զգայ պոլսահայ վաճառականութեան անհրաժեշտութիւնը իւր ապրանքների և արտաձուգ նիւթերի տարածման, ինչպէս նաև արտասահմանեան հում նիւթերը իւր սահմանները ներմուծելու համար: Յոյների և եւրոպական ժողովրդների մրցումը Նեղուցների և Միջերկրական ծովի ափերում պիտի ստիպէ Ռուսաստանին կարիք զգայ հայկական կազմակերպւած առևտրի, որն արդէն իսկ խոր արժաններ է ձգել այդ շրջաններում, ամբողջ Առաջաւոր Ասիայում, Եգիպտոսում (Նուբար փաշայի ականջը իրօսի) և Միջերկրական ծովի բոլոր ափերում: Պոլսի հայերը (այսինքն հայ վաճառականները) իրենց հերթին կը միանան իրենց ազգակիցների հետ, որոնք ապրում են Մոսկւայում և Ռուսաստանի միւս քաղաքներում, ինչպէս նաև Կովկասում, անքակտելիօրէն կը կապուին սուսական արդիւնագործութեան հետ, ընդարձակելով արդիւնով իրենց գործունէութիւնը և ամուր պահելով այն առևտրական ռայոնները, ուր նրանք դարբերով հաստատւած են» (էջ 12):

Ապա ինքը հայ ժողովուրդը: Ի՞նչ է ստանում նա իւր բազմած անկախութիւնից, այն ժողովուրդը,

որին տաճկական (միայն տաճկական) լծից ազատազրելու մտահոգութիւնից այնքան տանջուած և տապաւնուած է հայ բուրժուազիան:

Օ՛, շատ բան Նախ՝ «Հայաստանը (կարգայ՝ Հայաստանի ժողովուրդը) պարտաւոր պիտի լինի վճարել եւրոպական ժողովրդներին (կարգայ՝ եւրոպական իմպերիալիստներին), Տաճկաստանի պարտքի իւր մասը» (էջ 30): Երկրորդ՝ «Հայաստանը (Հայաստանի ժողովուրդը), պարտաւոր պիտի լինի հատուցանել եւրոպային (այսինքն եւրոպական իմպերիալիստներին) նաև այն ծախքերի մասը, որն տնուած է նա Տաճկաստանի գէժ պատերազմելով»: Երրորդ՝ «Հայաստանը (Հայաստանի ժողովուրդը) պէտք է վճարէ եւրոպային (եւրոպական գիշատիչներին) և այն ամենը, ինչ նա կը ցանկանայ ստանալ Հայաստանի համար» (այսինքն Հայաստանի երկիրը իւր ժողովրդով հայ բուրժուազիային վաճառելու համար), բուրժուազայի վարձկան գրիչները միշտ մոռեն արտայայտւում, երբ հարկաւոր է ժողովրդին խորել ու գրուել: Եւ դիւքք ինչու համար Հայաստանի ժողովրդի այժմեան և ապագայ սերունդները պիտի կրեն այդ ծանր խաչը, պիտի անքան տուրքերի ստակալի ծանրութեան տակ: «Հայերը (այսինքն հայ ժողովրդի ստորին խաւերը), չպէտք է լինեն պարտաւորյալ, նրանք պէտք է իրանց սեփական աշխատանքի, քրտինքի և զրկանքների միջոցով աւելին տան Եւրոպային ինչ որ նա պահանջէ, որպէսզի բաց ձախառով հարողանան առիւ մարդկութեանը, մենք արիւնով և քրտինքով ենք ձեռք բերել մեր ազատութիւնը» (էջ 30): Խեղճ հայ ժողովուրդ, քո Եւրոպացու բուրժուան հրաւիրում է քեզ արիւն ու քրտինք թափել, ծով զրկանքների քաջել, սե օրեր ապրել, տնքալ, տանջւել միայն նրա համար, որ ինքը ոսկիներով լեցնէ իւր գրպանը, յգլխանայ և փրէի: Սակայն հայ ժողովրդի

այդ անշարի ու անսահման դոնողութիւնը զեռ շատ քիչ է: Հայ բուրժուան ազգասիրութիւնից և հայրենասիրութիւնից զրդւած՝ չէ կարող այդքան չնչին ու աննշան վարձատրութեամբ պարգևել նրան ազատագրութիւն և անկախութիւն: Ի գիտութիւն ամբողջ իմպերիալիստական աշխարհի նա յայտարարում է, որ Հայաստանի ժողովուրդը առաւ կապիտալիստական բուրժուալիայի տնտեսական և քաղաքական յաւիտենական ստրուկը պիտի լինի: Նա նախապէս խոստանում է, որ «Հայաստանը, ազատութիւն օտանալով, պիտի իսկոյն և եթ փոխառութիւն կնքէ և վճարէ Ռուսաստանին այն ամբողջ գումարը, որը նա կը պահանջէ իւր գոնողութիւնների համար այս ծանր պատերազմի ընթացքում»: Եր «Հայաստանը պէտք է մաքսային օրէնքներով ընդմիջտ յանձնւած լինի Ռուսաստանին, որպէսզի նա Մնայ վերջինիս զարգացող արդիւնազորութեան յաւիտենական շուկան»: Եր «Հայաստանի ծխախոտային մենապաճառը պիտի արւի Ռուսաստանին»: Եր Հայաստանի երկաթուղիները, ինչպէս նաև բերդերը և պաշտպանութեան միւս կառուցւածքները պիտի շինեն Ռուսաստանի զինուորական և առևտրական պահանջների և շահերի համաձայն (էջ 34)...

Եւ որու իմպերիալիստական բուրժուազիայի այդ մոնոպոլ գերիշխանութիւնից Հայաստանում կօգտւէ ոչ միայն որու գաղութային կապիտալը, այլ նաև ինքը՝ հայ բուրժուազիան:

Անա ինչպիսի յոյսերով էր ապրում, ինչպիսի հեռանկարներով շնչում հայ իմպերիալիստական բուրժուազիան, երբ որու բանորներն ու գիւղացիները իրենց հզօր բազուկների հերոսական հարւածի մի ախտով՝ հոկտեմբերեան յեղափոխութեամբ

Չարխախցին հայ հայրաստանորդ տարրերի իլիւզիաները: Պարզ է, քր նրանք ամենատրոյակի կերպով դէմ պէտք է լինէին բանորա-գիւղացիական յեղափոխութեան ամբապնդմանը, ծաւալմանը և նրա հետեւանքների կիրառմանը Անդրկովկասում և Հայաստանում մասնաւորապէս: Նրանք ոչ մի բանի առջև կանգ չպիտի առնէին, ամեն միջոցների պիտի դիմէին, ջանք ու եռանդ՝ չպիտի խնայէին, որպէսզի գէթ իրենց բնավայրը «փրկէին սոցիալական աղէտից», որպէսզի գէթ մի ունիւն ունենան՝ բուրժուական սեփականութիւնն ու իշխանութիւնը հաստատ ու կանգուն պահելու, որպէսզի ունենան մի զրահապատ դիրք՝ իրենց փափազած իդէալների համար կռիւ մղելու, այս կամ այն փոփոխութիւններով առաջ տանելու և իրականացնելու: Նոյն հակակրանքն ու թշնամանքը գէպի սոցիալիստական Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը՝ գէպի սոցիալիստական յեղափոխութիւնն ընդհանրապէս, բնականաբար, պէտք է ունենային նաև վրաց թաւաղականութիւնը և թուրք աղայաբուրժուան: Նրանք, մանաւանդ հայ և վրացի հարուստ գաւառաբեկերը չունենալով իրենց ուժեղ և ազդեցիկ գաւառաբային կուսակցութիւնները, յաջողեցին իրենց այդ թշնամանքի ու պայքարի գէնը ծառայեցնել մանր բուրժուական ազգայնական կուսակցութիւններին՝ զաշնակցականներին և վրաց մենշևիկներին: Արանց օգնութեան հասան որու իմպերիալիստների Անդրկովկասի կոյր ազնեաները՝ սոցիալիստ-յեղափոխականները: Իշխող և հարստահարող գաւառաբեկերին Անդրկովկասում սոցիալիստական-յեղափոխական շնչառակ հարւածներից փրկելու համար՝ սրանք հանձարեղ միտք յղացին—կտրել Անդրկովկասը բանորա-գիւղացիական

խոսաստանից, անանցանելի պատմէշ քաշել նրանց
միջեւ, հաաքել եւ կազմակերպել այստեղ հակայե-
զամիոխական ուժեր եւ օգնութիւն հասցնել սոցիալիս-
տական յեղափոխութեան ոռոսական թշնամիներէն
քորժուագիայի պիկտատուրան այնտեղ վերահաս-
տատելու համար: Անգրկովկասեան իշխող դատակար-
գերի քաղձանքին համադատաախանող այդ սեւ մտքին,
խեղճեախինի նման, կպչում են գեմօկրատիայի անու-
նից ճառող դաշնակցականներն ու մինչեւ իկնիրը՝ առանց
հաշի աննիլու այն սոսկալի հետեանքը լայն խառելի
համար, որ հաւանականօէն առաջ պիտի դար երեք խո-
շոր աղգութիւնների աղցային իշխող տարրերի հակա-
գիր շահերի եւ ձգառմների անքնական կռալիցիայից:
Այդ կռակկցութիւնների խնթ ու պատճառ աւան
էր, որ հնարաւորութիւն տւեց արտաքին խմայերիալիս-
տական աշխարհին խաղալիք դարձնել եւ արիւնով ներ-
կել Անգրկովկասն ու Հայաստանը, այն ախար, որ ծայր
տւեց հայ աշխատաւորութեան տառապանքներին, վր-
կութիւն եւ ելք աղաղակող լաջ ու կոծին:

Բացարձակապէս յարելով իմպերիալիստական
բանաւկերն՝ ընդգէմ սոցիալիստական բանաւի, անանց
այլեւայլութեան ուղղելով իրենց նուր գեպի բարձ-
ւակոն բեկոր՝ ճակատակ պրոլետարիան բեկորին,
ստոր և անսղփելի կերպով դառաճանելով ոչ միայն
սուս բանտարա-գրեզոցիութեան սոցիալիստական ան-
հաւատար կուրին, այ և իրենց սեփական ժողովուրդներին
լայն զանգւածների շահերին, այդ կուսակցութիւնները՝
յանձնա իրենց քառակուսի պանպղձ դեկադ սըներին՝
պէտք է կամայ թէ ակամայ վարելու ազգային իմ-
պերիալիստական քաղաքականութիւն։ Արեւմտեան
իմպերիալիստների թշնամի կալիքիանների մենամար-
տութիւնը անխուսառնեցողէն ակառ ի պայմ անկախ

Անդրկովկասեան Բախտութեան միջնոյն յարկի տակ ապրող, անկայն հակասական շահեր ունեցող ազգային նշխող դատակարգերի մէջ տարբեր, իրար ժխտող «օրինատացիաներ»։ Արնածարա թշնամիները միացել էին, որպէսզի նրանց ձայնը նորակազմ ոսցիալիստական Փրոմտի դէմ հռժկու և խրոխտ լինի։ Իսկ երբ նրանք նայում էին դէպի արևմտեան իմպերիալիստական Փրոմտը, նրանց այդ սրատառու միութիւնը խոր ճիզբեր էր տալիս։ Դաշնակցութիւնը, որ շատ լաւ իւրացրել և մարսել էր հայ իմպերիալիստական բուրժուազիայի ձգտումներն ու իղձերը, սրա՝ դէպի իմպերիալիստական Ռուսաստանը ունեցած ակնկալութիւններն ու ապասելիքները, անկասկած իւր անձկալի հայեացքը պիտի յատէր դէպի «անյաղթելի Անգլիան»՝ իմպերիալիստական Ռուսաստանի իմպերիալիստական դաշնակցին։ Վրաց մենշեիկները մի կողմից ականջ կախելով թրքամու, սուլթանական օկոթմին սիրահար ազնականութեան պահանջին, և նորածնունդ հակահայ բուրժուազիայի՝ Բիսմարկի դաւակների միջոցով հայ բուրժուազիային տապալիլու պտղատներին, իսկ միւս կողմից յայտառելով «ընկեր» Շէյքիմանի խոշոր ազդեցութեան վրայ Վիլհելմի շատրում, սողում ևն առանց կարմրելու գերմանօտանձկական իմպերիալիստների յաղթական սրի առջև *)։ Իսկ թուրք իշխող դատակարգի կուսակցութիւնը՝ Մուսաաթը, ձեռքերը շփելով, ժամեր էր համարում այն երջանիկ օրի, երբ Տիրու և Մարգարէի սանձակը շէրիֆ (նւիրական դրօշակը) կը հաստատուի Կովկասեան ընդհանրակալի վրայ և մօնոպոլ կեղեքման ու շահ

*) Հայ մեհնդիկները բալթավիկն կորցրել էին իրենց գլուխը: Նրանք այնքան էին անօգնական դարձել, որ իրենց չմած հայեացքը յառել էին գեղի օդային տարածությունը և նիրա. նայից էին ազնվասուս:

գործման լայն ասպարէզ կը բացուի թուրք կալաւածատէրերի և կապիտալիստների համար:

Ազգային իշխող դասակարգերի ներհակ ու հակառակ նպատակներով ու ցանկութիւններով առաջնորդուող, ներքին անհաշտ թշնամութեամբ տոգորուած այդ երեք ազգայնական կուսակցութիւնների «անբընական ամուսնութիւնը» երկար տեւել չէր կարող: Նըրանց առաջին և մերձուոր, միեւնոյն ժամանակ ընդհանուր նպատակը — քայքայել սոցիալիստական կուլի թիկունքը, արեան մէջ խեղդել կովկասեան յեղափոխական ուսն բանակը, որ շտապում էր քաղաքիական պատերազմի գաշտը — այդ այնքան էր կուրացրել ու բթացրել Դաշնակցութեան զեկավարներին, որ սրանք չէին ուզում նկատել, թէ ինչպէս մուսաւաթականները մենշեիկների թոյլութեամբ և գիտակցութեամբ, թլուծ են յեղափոխական պատերազմ գնացող զինուորների գէնքը և զինուած իրենց բանդաներն ի վնաս Անգրկովկասի, մասնաւորապէս Հայաստանի խեղճ ու կրակ ժողովրդների: Դանի գեռ նրանք զբաղւած էին ուսն զինուորների արիւնով Անգրկովկասը ոռոգելով, քանի գեռ նրանք մտահոգւած էին Խորհրդային Իշխանութեան պաշտպանութեան համար տարւող ազգական հարստութիւնները աւազակաբարոյ իւրացնելով, նրանք իրենց ամուսնական կապը պահպանում էին յանուն «ընդհանուր (?) հայրենիքի պաշտպանութեան»: Բայց երբ հասաւ «հայրենիքի» պաշտպանութեան ժամը, երբ նրանք պոռոտախօս մեծամտութեամբ երես դարձրին Բրիտ-Լիտովսկի պայմանագրից, որը իրօք պաշտպանելու էր հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, երբ մենշեիկներն ու մուսաւաթականները հասան իրենց նենգամիտ նպատակին,

— խզեց նրանց անբնական կապը և հայ ժողովուրդը յանձնեց տաճկական խմբերիալիստական զօրքի վայրագութիւններին ու օրախոզխոզութեանը: Դաշնակցութեան պարագլուխները այնքան էին տհաս քաղաքականութեան մէջ, որ ձեկիրների միամտութեամբ հաւատում էին, թէ մուսաւաթականներն ու մենշեիկները խաբւած կատարում են հայ բուրժուազիայի կողմից Դաշնակցութեան վրայ գրած «աղբային» դործը և հարիւրապատիկ եռանդ ստացած՝ գոռում գոչում էին, որ իբր թէ Բրեւտեան դաշնագիրը թուեաւոր սուր է ցցում հայութեան սիրաբաւ Այնինչ եթէ այդ գաշտագիրը ընդունւէր Մեդրկովկասի կողմից՝ հայի մի կաթիլ արիւնն անդամ չէր թափւի, հայ ժողովուրդը աւերածութեան ու ջարդի, թալանի ու գաղթի չէր ենթարկւի: Գուցէ հայ բանւորութիւնն ու գիւղացիութիւնը իւր զբացի ժողովրդների հետ միասին ստիպւած լինէին զէնքի գիմել, բայց այդ զէնքը նա պիտի պործապրէր իւր սեփական երկիրը, իւր սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու, ընդաճակելու և յեղափոխական պատերազմ մղելու նրանց դէմ, «վքեր յանդգնութիւն ու համարձակութիւն կունենային որեւէ ճնշում դործադրելուց կամ այն ժողովրդի վրայ: Սակայն Դաշնակցութեանը ժողովրդի պայութիւնն ու շտրը չէ՝ որ հետաքրքրում է, այլ բուրժուազիայի տիրապետութիւնը հաստատ պահելն ու տարածելը:

Խմբերիալիստական իդէոլոգիայով շնչողները ապրում են տնտիշական ներկայով. Նըրանց համար գոյութիւն չունի վաղը, մօտիկ ապագան: Հայ վաճառականների տպրումներով տարւած դաշնակցականները կարծում էին, թէ աշխարհիս վրայ ամեն ինչ վերջացել պրծել է, և Հայաստանում ընդմիշտ թաղաւորելու է

տաճկական զինուորականութիւնը: Նրանք, որ երէկ
ուզում էին սուս իմպերիալիստների ու օտարապետների
առջև և լիզում նրանց ոտքերի փոշին, այսօր սկսում
են սողալ տաճիկ իմպերիալիստների ու փաշաների
առջև և նոյն լիզում լիզել նրանց ոտքերը: Հայ ժողո-
վրդի խոշորագոյն մասը կոտորել էր արդէն թէ արից
և թէ քաղցից, թէ իւր հայրենի հողի վրայ և թէ գաղ-
թի հեռուօր ճանապարհներում: Հայ բուրժուաներին
այլևս չէր հետաքրքրում «արշինանոց» Հայաստանը.
նրան մտահոգութիւն էր պատճառում քաղաքապէս այն
վտանգը, որ ներկայ հանգամանքներում կարող էր
սպառնալ նրա գերիշխանութեանը թէ Վրաստանում՝ և
թէ Ադրբեջանում: Եւ գաշնակցականները, լինելով հայ
իշխող դասակարգի մտայնութեան գործադրող՝ միայն
«աշխատաւորական» առգայով ծածկւած, մտահոգւած
էին իրենց ազգային բուրժուազիայի շահերի և իրա-
ւունքների պաշտպանութեան խնդրով թիֆլիզում և
Բազում: Նրանք երկիրես Յանուսի նման մի կողմից
առամներ էին կրճատւում «վրացիներին» նկատմամբ,
տարածում և խորացնում էին հայ մասսաների մէջ
այն թշնամական թոյնը, որ առատօրէն արտադրել էին
վրաց մենշեիկները իրենց մասսաները ազգայնակա-
նութեամբ թունաւորելու համար, իսկ միւս կողմից
ժափահարում և փառաբանում էին մենշեիկների ար-
տաքին հակաօղորդական քաղաքականութիւնը, որի
շնորհիւ իբրեւ թէ «փրկել» են «հայերը» Վրաստանում
ընդհանրապէս և Լուում մասնաւորապէս: Նրանք մի
կողմից իրենց սրտի խորքերում գծկամակում և հայ-
հոյում էին վրաց մենշեիկներին այն բանի համար, որ
ախրահուշակ Չիսնկիլին չափազանց թանկ և մեծարու-
նակ զոհերի գնով գնեց այդ «փրկութիւնը», իսկ միւս

կողմից ուր-խանում էին, որ նոյն այդ մենշեիկները
ստրկացրել են Վրաստանի ժողովրդական մասսաները
գերմանական իպերիալիզմին, եւանդուն օգնում էին
նրանց և զործակցում՝ Մորհրդային Ռուսաստանի թի-
կունքում հակալիպսոթութեան ամբապնդման, Ան-
դրեկովկասի սրտում արեւելեան ժողովրդների և մաս-
նաւորապէս հայ մասսաների համար նորագոյն սար-
կութեան լուծ կոփող դարբնոց հիմնելուն: Այդ ճա-
նաւանները մի կողմից հրդեհում էին ազգայնական առե-
շութիւնը Բազում, ծայրահեղօրէն խորացնում երկու
ժողովրդների թշնամական խորագութիւնը, փոքրում
թուրք կապիտալի հիմքերը, օրպէսզի ամբանան հայ
կապիտալի դիրքերը և այդպիսով աւելի ու աւելի իւզ
ածում մուսաւաթական կրակի վրայ, իսկ միւս կող-
մից զափնինել էին հիւսում սուսական թաղւած իմ-
պերիալիզմի գաշնակից անդլիական իպերիալիզմի ներ-
կայացուցիչների աւաղակային առաջխաղացմանը՝ հենց
յօդուս մուսաւաթական խաների ու բէկերի, և թա-
կարդներ լարում այն բանաւորական իշխանութեան գէժ,
որը Անդրկովկասեան և մասնաւորապէս Հայաստանի
ժողովրդի համար փրկարար փարոս էր: Այդպիսով հայ
մասսաները մատնւում էին քայքայման, անանկութեան՝
չքաւորութեան, ժահացութեան և սրախողխողութեան:

Ազգայնական, աշխիւքն բուրժուական, քաղաքա-
կանութիւնը իւր երակէտը դարձրած, հայ վաճառական-
ների և արդիւնադործների ձգտումներն ու բազմաճնե-
րը սեփականացրած, կապիտալի և աշխատանքի հա-
մաշխարհային կռում վերջնականապէս առաջինին յա-
քած, սակայն իրեն «աշխատաւորական» փեսաւորներով
զարդարած՝ գաշնակցական կուսակցութիւնը անգամ
կեանքի փորձից, իրականութեան դասից չկարողացաւ

հասկանալ, որ հայ ժողովրդի գոյութեան վտանգ ապահանջողը ինքը ի պերիալիզմն է, որ կռակեցիւ ինչ էլ պատկանելու լինի նա, որ կողմից էլ գալու լինի նա: Վանի առաջին 300000-նոց դադթականութիւնը՝ տանջանքի ու արցունքի, արեան ու դիակների վրայ Հայաստանի համար «երջանկութիւն» կառուցող ոռոտական իմպերիալիստների գործն էր: Մենք տեսանք, թէ ինչպիսի աւերածութիւն է բնաջնջում առաջ բերեց տաճկական իմպերիալիզմը: Սակայն դաշնակցականներն այնքան էին տարւած հայ բուրժուազիայի տիրապետութեան իդեալով, այնքան էին հարկած իմպերիալիզմի իդէալոգիայով, որ սոսկալի անցքերն անգամ և դժոխային հետեւանքներն իսկ չկարողացան սթափեցնել նրանց: Նրանք բուրժուազիայի դերիներն էին և իմպերիալիստների սարուկները: Եւ ձգտում էին կատարելագէտ ու վերջնականագէտ դերի դարձնել և ստրկացնել հայ աշխատաւոր լայն մասսաները: Անգլիական զինւորական տարազը շշմեցնում է նրանց, դաշնակիցների զէնքի յաղթանակը հիւանդոտ զառանցանքի ենթարկում: Նրանք ոչ միայն խելքը կտրցրած նետում են անդլիական նւաճողական դորամաի սուքերի տակ, այլ և իրենց դարձնում են նրա կոյր դորժիքը: Դաշնակցական ղեկավարները այնքան են միամտանում, որ կարծում են, թէ անգլիական զինւորներն իրենց զինւորներն են: Եւ միամտորէն յենեւում այդ «իրական ուժի» վրա՝ նրանք բացում են իրենց լիզելի կապանքները և ուժ առլիս իրենց ախորժակներին: Իսկ գաղութային բաղադրականութեան մէջ աղէտ սցած անգլիացիները խելաւորոյս դաշնակցականների մէջքին նստած՝ առաջ էին տանում իրենց քաղաքականութիւնը, որի հետեւնքը, ինչպէս տեսանք

նախորդ գլխում, շատ թանկ նստեց Հայաստանի ժողովրդին:

Դաշնակցական կառավարութիւնը մտնում է իւր գերի մէջ, ինչպէս որ երէկ մենշեիկական և մուսաւաթական կառավարութիւնները յենած զերմանական և տաճկական անլաղթ սրի վրայ ամեն կերպ սխմում էին հայ ժողովրդին և ձգտում խելագաման անել նրան, մտածելով՝ թէ այդպիսով հարւած հասցրած և տապալած կը լինեն հայ բուրժուազիային, այնպէս էլ այժմ դաշնակցական կառավարութիւնն է ձգտում վրէժ լուծել նրանցից, օգտուելով «մեծ դաշնակցի» ներկայութիւնից: Այդ երեք իրար արժող կուսակցութիւններն էլ օտար իմպերիալիստների գործիքը լինելով, մեծ եռանդով ու թափով առաջ էին առնում այն, ինչ որ ձեռնառու ու ցանկալի էր օտար խորամանկ զիշատիչներին: Սրանք փորձեր էին անում գծադրելու իրենց ազդեցութեան շրջանները, հում նիւթեր կորզելու սահմանները, իսկ ստրուկ կառավարութիւնները կրկնակի եռանդով աջակցում էին նրանց՝ առանց մի րոպէ անգամ խղճահարելու այն բանի վրայ, որ դրանից վերադանցօրէն տուժողն ինքը ժողովուրդն է լինելու: Հարևան ժողովուրդները ոչ միայն բաժանւում, օտարանում են մէկ մէկուց և թշնամանում, այլ և խելդուում են իրենց ազգային կեղեկների մէջ: Եթէ դաշնակցականները հպարտանում են անգլիացիներին թագուն ժպիտով, ապա մենշեիկները և մուսաւաթականները, քաջալիբեւելով նման ժպիտով, պատժում են Հայաստանի ժողովրդին իրենց աշխարհագրական դիրքով հենց այն պատճառով, որ այդ ժողովրդի վրայ իշխողը դաշնակցականների հոնում թող կացած հայ բուրժուազիան է, այլ ոչ թէ մենշեիկներն և մուսաւաթա-

կաններն հաւում աչքերը չափ վրայի և թուրք իշխող դասակարգը: Հայաստանի թալանւած ու քայքայւած, սոված ու հիւանդ ժողովուրդը պաշարման է ենթարկւում: Նրան կտրում են դրսի աշխարհից և թողնում առանց հացի և սերմացուի, առանց ղեղորայքի և զործիքների: Սովի և հիւանդութեան աստածը անողորմ կերպով հնձում է Հայաստանի ժողովուրդը, ծայրահեղօրէն թուլացնում նրա աշխատանքի եռանդը, պարալիզացիայի ենթարկում նրա կամքը:

Անտանտայի իմպերիալիստներին վաճառւած լինելով, նրանց կոյր զործիքը կազմելով, հայ իշխող տարրերի պետական ձգտումներով առաջնորդւելով, դաշնակցականները հենց միայն այն պատճառով, որ անգլիացիները երէկ պատերազմում էին իրենց երրորդ հարեանի՝ Տաճկաստանի դէմ, կարծում էին՝ թէ «հիւանդ ժարդը» արդէն մեռել է և կարելի է նրա զոռացած ժառանգութեան մի մասը հեղափոխումը իւրացնել: Նրանք թէև, փառք աստծոյ, կարծես հասկացել են, որ նայն արևմտեան իմպերիալիստների աշահիրը լրջօրէն քաղիւում են՝ այդ ժառանգութեան նկատմամբ, բայց այնքան պարզամիտ են և թոթովող երեխաների նման խաբւող, որ հաւատում են, թէ նրանք յամենայն դէպս կը զսպեն իրենց ախորժակները հենց յանուն մարդասիրութեան, յանուն այն թաքմ արիւնի, որ թափել են աւել հայ ժողովրդին քաղաքակրթւած քրիստոնէայ պետութիւնները՝ «դիմոկրատիկ» Անգլիան, «ազնիւ» Թրանսիան, հայ աչքերին միշտ սիրաճար գոլիցիներան Ռուսաստանը: Տարւած լինելով ազգայնական-բուրժուական քաղաքականութեամբ՝ նրանք չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ հենց իրենց անասկէտից այն բնական ձգտումը, որ պէտք է ունենան տաճիկ իշխող դասակարգերը—ձգտել պահպանելու իրենց ժա-

ռանգութիւնը, կանգուն պահելու իրենց գերիշխանութիւնն ու տիրապետութիւնը իր հին սահմաններում: Բաւական է յիշել այսպէս կոչւած «իրաւունքի պաշտպանութեան արեւելեան Անատոլիայի ընկերութիւնը», որի գլուխն է կանգնած Մուստաֆա Քեմալ վաշան,*): որպէսզի հասկանալի լինի, թէ ինչպիսի կրակի հետ են խաղում Դաշնակցութեան միամիտ ղեկավարները:

Ազգայնական-փաշայական, աւազակային-տիրապետական այդ շարժումը, որ առաջ է եկել իշխելու սովորութիւնից, գերազանցօրէն քաջալիրւում է շահագրգռւած իմպերիալիստների կողմից: Այդ շարժման պարազլուխ Մուստաֆա Քեմալ վաշան յայտնել է, որ «Եւրոպայի և Ամերիկայի քաղաքական ու զինւորական ներկայացուցիչները գնահատում են իր կազմակերպութեան և ազգային շարժման օրինական բնոյթը» («Ստամբուլ»): Իսկ «Ազրբէջան» թերթը հաղորդում է, որ «համաձայնութեան պետութիւնները որոշակի ձեռնպահ են համակրանք կամ հակակրանք յայտնելու տաճիկների ազգային շարժման նկատմամբ»: Եւ դա շատ պարզ է: Զէ որ «ժողովուրդները չեն կարող հակառակ իրենց կամքին ձեռքից ձեռք անցնել»: Է՞ որ «ազգիքը իրաւունք ունեն արած ու անկախ ապրելու»: Մակայն այդպիսի վերաբերմունքի բուն իմաստը կայանում է նրանում, որ փաշաներով ղեկավարւող տաճիկներին էլ պէտք է խաղացնել, մատներն վրայ պարածել, որպէսզի հեշտ լինի սեփական գործերը շահել,

*) Այդ ընկերութիւնը նպատակ է դրել «կազմակերպել ազգային ուժերը և գործով արտայայտել ազգային կամքը», որպէսզի ապահովի «առանկալոր տիրապետութեան ամրոպութիւնը և մեր (տաճիկական) ցեղի անկախութիւնը», պաշտպանի «տուրքանի և խալիֆայի մայրաքաղաքը» և ընդդիմադրի «լուսական կամ հայկական գրամմներ և տմեն տնտեսի միջամտութիւնը» («Декларация турецкого конгресса въ Эрзеруме»).

հաշիւները կանոնաւորել, որպէսզի դէպքերի այլ դասաւորութեան ատենին ուղած ուղղութեամբ կարելի լինի օգտագործել այդ շարժումը: Եթէ մի ձեռքով նրանք հրահրում են փաշաներին պատրաստ լինել իրենց իրաւունքների ժաջսիմումը պահանջելու, իսկ միւս ձեռքով ապտակում են նրանց և բաժինը խլում, ապա դա ոչինչ՝ այդպէս է թելադրում իմպերիալիստական քաղաքականութիւնը: Եթէ անգլիական և ֆրանսիական գիշատիչները, առանց նոյնիսկ հաշիւ առնելու Վերսայլի տիկնիկներին հաւաքոյթը, համաձայնութեան են եկել ֆրանսիացիների ճիրաններին յանձնելու Սիւրիան և Կիլիկիան մինչև Սերաստիա և Տիգրանակերտ, այսինքն այն հողամասերը, որն մուստաֆա-քեմալականները համարում են իրենց սեփականութիւն, ապա, դա բոլորովին չէ նշանակում, թէ տաճիկ ազգայնական շարժման գոյութեանը հարւած է հասնում: Չէ՞ որ կան գեաւ ընդարձակ հողամասեր—Թոկատը, Էրզրումը, Քիթլիսը, Վանը, որոնք տակաւին անտէր են և որոնց վերաբերմամբ քեմալականները կարող կը լինեն, եթէ իհարկէ կարիք լինի, իրենց խօսքն ասելու: Հոգ չէ բոլորովին, որ այդտեղ երկու նման շարժումներ հանդիպելու են իրար:

Այդ երկու շարժումները՝ քեմալական և դաշնակցական շարժումները, որ իրենց էութեամբ նման են, իսկ նպատակներով տրամադծօրէն հակադաս, յիշաւի բաղխելու են: Դաշնակցական շարժումը, որին իրենք դաշնակցականները անւանում են «ազգային», որովհետեւ «ով որ հայ է՝ նա դաշնակցական է», սակայն փաստօրէն դա Մոսկուայի և Անդրկովկասի հայ վաճառականների ու արգենտագոծների ձգտումն է դէպի Փոքր Ասիա, Դուսի և Ամերիկայի հայ հարուստների

ձգտումն է հաստատել իրենց գերիշխանութիւնը Հայաստանում: Իսկ Մուստաֆա-Քեմալեան շարժումը, որին քեմալականները անւանում են «ազգային», որովհետեւ «ընկերութիւնը ազատ է սեկտանտային կամ կուռակցական ազդեցութիւնից և ամեն մի մուսուլման հայրենակից նրա անդամն է («Декларация»), սակայն փաստօրէն դա տաճիկ պորտաբոյժ փաշաների, տզրուկ պաշտօնեաների և զանազան թաւանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանութիւնը այսպէս կոչւած Տաճկաստանում, նրանց շարժումն է դէպի Անդրկովկաս: Դաշնակցական կառավարութեամբ ղեկավարուող հայ բուրժուական շարժման նպատակն է արհանալ այն երկրին, որը «երբեմն» պատկանելիս է եղել հայերին և աւաղակարար զրաււած տաճիկ արիւնսուշտ սուլթաններով: Մուստաֆա Քեմալի «ընկերութեամբ» ղեկավարւող փաշայական վոյսմակի շարժման նպատակն է պահել իւր արիւնքեւութեան ներքոյ այն երկիրը, որ երբեմն բռնադրուել են նոյն այդ փաշաները և որի վրայ «այժմ» ապրում են փաշաների «արիւնակից եղբայրները, հայրենակիցները, հաւատակիցները»: Այդ երկրում հայ վաճառականների համար շահաւէտ ասպարէզ, բուրժուական մտաւորականների՝ պնակալէզ թիրուսների համար չափ պաշտօնեներ ձեռք բերելու համար՝ դաշնակցական կառավարութիւնը օգնութիւն է աղերսում արեւմտեան իմպերիալիստներից, որի փոխալէն յանձնում է Հայաստանի գիւղացիութիւնն ու բանւորութիւնը այդ գիշատիչների անխնայ կոտորածներով: Տաճիկ փաշաների, բէյերի, էֆենդիների և ընդհանրապէս մեծ ու փոքր պետական պաշտօնեաների և զանազան եղեւնագործների գնդիս ու շուայլ, անքրտինք ու անաշխատ

տանք կեանքը հաստատ պահելու համար՝ Մուստաֆա-
նի մարեան ընկերութիւնը պահանջում է Փարիզի կոն-
գրանսից պահպանել Տաճկաստանի հողային ամբող-
ջութիւնը, անկախութիւնը, խալիֆայութեան և սուլ-
թանութեան իրաւունքները, որի փոխարէն համա-
ձայնում է ապա Տաճկաստանի գիւղացիութիւնն ու
բանասրութիւնը օտար կապիտալի աննախընթաց շա-
հագործութեան: Երկուսն էլ առանց քաշելու ծախում
են ժողովուրդին. վէճը միայն նրանումն է, թէ այդ վա-
ճառումից ստացած օգուտը ում զրպանը պիտի գնայ՝
հայ վաճառականի, թէ՞ տաճիկ փաշայի: Դատավճիռը
պիտի կայացնէ արեւմտեան իմպերիալիզմը: Ինչդիտի
վճիռ էլ կայացնելու լինի այս վերջինը յամենայն դէպս
տուժողը հայ և տաճիկ ժողովուրդներն են լինելու ինարկէ:

Երկու տեսակ վճիռ միայն կարող են սահմանել
իմպերիալիստները—առաջին՝ զրկել մէկին և միւսին,
կրկրորդ՝ զրկել մէկին կամ միւսին:

Ամենահաւանականը, անշուշտ, առաջինն է:
Զպէսք է լինել «յոսեւտե», որպէսզի հաւանական հա-
մարի այդպիսի վճիռը: Նրանք, ովքեր ձենց սկզբից
հասկացել էին պատերազմի աշխարհակալական բնոյթը,
պնդում էին շարունակաբար, որ իմպերիալիզմի իզեղ-
ւոյնների զրոյցը «ազգերի հաւասարութեան», «ժողո-
վուրդների իրաւունքի», «փոքր ազգերի ազատագրու-
թեան» մասին միմիայն ֆրազներ են՝ ժողովուրդների ար-
իւնը հոսեցնելու համար, սին խոստումներ են՝ նրանց
խաբելու համար, խոստումներ, որոնք երբէք չպիտի ի-
րագործեն: Հենց իրենք յաղթական իմպերիալիստ-
ներն են, որ նաճում, բռնագրաւում, իրար մէջ բա-
ժանում են յաղթւած հակառակորդների հողամասերը,
խեղաքնում, սեփականացնում, յափշտակում փոքր ազ-

գների ընտելալիքը: Այսօր կոյրերն անգամ տեսնում են
այդ, անուղղելի բուստեաններն ու քաղաքական երե-
խաներն իսկ համոզուել են այդ պարզ ճշմարտութեան
մէջ: Մինչև անգամ դաշնակցական ղեկավարներն են
բմբռնել այդ, որ սպացոյց է, թէ որչափ մերկացած
է իրողութիւնը. հազար և մէկերորդ անգամ ստացած
հարւածն այնքան ուժգին էր, որ միամիտները սոսկա-
լի հաստ կաշին անգամ զգաց*): «Աշխարհի հզօրները
բաժանում են աշխարհը իրենց մէջ». այո, դա ասել և
կրկնել են կոմունիստները (բղլենիկները) բազմիցս
անգամ, բայց հայ ժողովուրդի բախաւ ձեռքերն առած
մարդիկ խուլ են ձեացել, կոյր են եղել միշտ: Այսօր
Դաշնակցութեան ղեկավարները կրկնում են նոյնը.
բայց ինչ արժէք ունի դա, երբ վաղը նոյն մարդիկ
մոռանալու են այդ, որովհետեւ նրանց յիշողութիւնը
էպրճ է և թոյլ: Եթէ աշխարհի հզօրներն այսօր յափշ-
տակել են արտը, հայ և տաճիկ ժողովուրդներից իրենց

*) Մենք չենք կարող զրկել մեր ընթերցողներին այն հո-
ւրդարձութիւնից, որ կարող է նա ստանալ «Յառաջի», այսին-
քին Դաշնակցութեան բերանի յառահառական ու պարզամիտ
զանգառանքի ընթերցումից. «Մերկ փոստն այն է, որ աշխարհի
յուրեղական խաղաղութիւնն ապահովելու և փոքր ազգերը ազա-
տագրելու համար հաւաքւած վեհաժողովը վերաջլուծ վերջի
վերջոյ ինչպէս գուշակում էին յոսեւտեանը, վերածւեց պատ-
մազմական ստարը միմիանց մէջ բաժանող մի հաւաքոյթի: Մո-
ռացւելիս րոյր մեծազգորդ խոստումները, որքի տակ տրեցին
սրբազան խօսքերն ու վեհ պաղափարները, ազգերի հաւասարու-
թեան ու ժողովուրդների իրաւունքի սկզբունքները: Մէջ տեղը
մնաց աշխարհկալ պետութիւնների չոր ու գեղեցիկ շահը... Եւ
ձեռքած ազգերը, որոնց ոտնահարւած իրաւունքները պաշտպանու-
թեան մասին վերջին տարիները այնքան գեղեցիկ ճառեր առե-
ցին, այսօր նոր ձնշումների ու սորկացման մասնդի տալի են
հանդնում: Աշխարհի հզօրները բաժանում են աշխարհը իրենց մէջ՝
(«Յառաջ» № 66, գեղեցիկ 11): Սրտի դատարկութիւնը, ընկճւած
տրամադրութիւնից առաջացած այդ պարզամիտ խոստովաւո-
թիւնը արւած է այն պատճառով, որ Անդրիան համաձայնել է
յոնձնել Պրատիսլային, առանց Դաշնակցութիւնից իրաւունք ստա-
նալու կամ նրա նկտ դնել խորհրդակցելու, ոչ միայն Միքիան,
այլ միայն իլիկիան, այլ և Զարաստանի մի մասը:

երկրները, վաղը նրանք յափշտակելու են տաճիկ և հայ ժողովրդների երկիրները և նրանց չլինքին գնելու ստրկութեան լուծը:

Հզօրների ձգտումն է այս իմպերիալիստական դարեջրջանում իրենց աշխարհակալութեանը ենթարկել նոր հողամասեր և ստրկացնել թոյլ ժողովրդներ: Ազգային շարժումներ՝ ինչպես գաշակցական և քմալական չեն կարող ազատագրել հայրենիքը և փրկել ժողովուրդն ստրկութիւնից: Այդ շարժումներն ուղղւած են ոչ թէ իսկական թշնամու, այլ գերազանցօրէն իրար դէմ: Դրանք ուղղւած են ոչ թէ ազգային եւ դատակարարի թշնամու դէմ, այլ սեփական ազգի տիրող դատակարարի գերիշխանութիւնը հաստատ պահելու կամ հաստատելու համար: Սոցիալիստական կռիւ դարեջրջանը պէտք է վերացնէ եւ պարտաւոր է վերացնելու ազգային ճնշումը՝ ճնշումների այդ ամենահին աւանդը: Իսկ դա կը լինի միայն այն ժամանակ, երբ ճնշող և ճնշւող ազգի ժողովուրդները երկուստեք կը բարձրացնեն ազատ ինքնորոշման գրօջը: Ժողովուրդն ինքը երբեք ճնշող չէ, այլ միշտ ճնշւող՝ բուրժուական և փաշայական բոլոր պարագաներում էլ: Զանազան ազգերի ճնշւող ժողովրդների փոխադարձ համաձայնութեամբ և օգնութեամբ միայն կարող է տեղի ունենալ հայրենիքի ազատագրութիւնը, ճնշւածների փրկութիւնը, որովհետեւ ժողովուրդները ազատ են կացուցւում բաժանելու և միանալու, սահմանելու իրենց բնակավայրերը իրենց սեփական և սիրայօժար կամքով: Հայ ժողովրդի և ոչ մի հարազատ զաւակը հակառակ լինել չէ կարող երբեք, որ տաճիկ բուն ժողովուրդը ազատագրէ երոպական իմպերիալիստների և տաճկական փաշաների անարդ լուծից: Հայ ժողովրդի և ոչ մի հարազատ զաւակը չէ կար-

ող համաձայնել, որ նոյն տաճիկ ժողովրդի չլինքին դնել հայ կապիտալիստի թաթը, նրա հիւժւած մարմնի վրայ հետքեր թողնեն հայ պաշտօնիայի մարտիների հարւածները: Հայ ժողովրդի իւրաքանչիւր հարազատ զաւակը մեծ հրճանքով կնշուէ տաճիկ ժողովրդի ազատ հայրենիքի հաստատումը: Այս քնդհակառակը, Տաճիկ ժողովրդի և ոչ մի հարազատ զաւակը հակառակ չէ կարող լինել երբեք, որ հայ բուն ժողովուրդը ազատագրէ երոպական իմպերիալիստների և հայ կապիտալիստների ծանր չղթաներից: Տաճիկ ժողովրդի և ոչ մի հարազատ զաւակը չէ կարող համաձայնել, որ նոյն հայ ժողովրդի վզին բռնի կերպով պահել տաճիկ փաշաների այն սպանիչ լուծը, որի հետաւոր պատկերացումից անդամ ստոկում են հայ մասաները: Հայ ժողովուրդը չէ կարող հանդուրժել այդ լուծը և պէտք է ձգտէ իւր բնավայրում հաստատել սեփական հայրենիք, իսկ տաճիկ ժողովուրդը միայն հրճանքով կողջունէ այդ ազատագրական ոգին, կը ծափահարէ այդ վճռական ձգտումը: Հայ և տաճիկ ժողովրդների էութեամբ եւ նպատակով այդ միեւնոյն շարժումներն են ահա, որ կազմում են կոմունիստների հռչակած՝ ժողովուրդների ինքնորոշման գաղափարի իմաստն ու բովանդակութիւնը: Այդ իսկական ազգային շարժումներն են ահա, որ իրար մէջք մէջքի տաւած՝ հզօր կերպով կը տանեն հայ և տաճիկ ժողովրդներին գէպի ազատագրութիւն, մահացու հարւած հաղթանքով իւրային և օտար հզօրների մտադրութեանն ու կամքին, այլ ոչ թէ քմալականներով և գաշակցականներով ղեկավարող «ազգային» շարժումները, որանք ընդհակառակը իւր են քրտւում հզօրների հացին, բնդարձակ ապարդիւց աւալիս նրանց կառքի արտայայտութեան զիկզակներին:

Մակայն այդ հոգրների կաժր կարող է արտա-
յայտել և ուրիշ կերպ—կամ յօգուտ տաճիկ փաշաների,
կամ էլ յօգուտ հայ կապիտալիստների: Կրկու գէպրում
էլ վայ հայ ժողովրդին: Առաջին գէպրում նա ոչ միայն
չունէ չէ կարողանալու քաշել տաճկական անիրաւու-
թիւններից, բռնութիւններից և վայրագութիւններից,
որոնցից դարեր շարունակ տանջւել ու տառապել, մաշ-
ւել ու հալւել է տաճկահայ ժողովուրդը, այլ և տնքալու
է օտար իմպերիալիստների երկաթէ լծի տակ: Կրկրորդ
գէպրում, ճիշտ է, նա զերծ է մնալու փաշաների և
գափթիանների սրից և անլուր կեղեքումներից, սակայն
տնքալու է հայ կապիտալիստների անխնայ չարագոր-
ծութեան և օտար իմպերիալիստների ծանր լծի տակ:
Քի որ զխաւորն է՝ նա կանգնելու է իսպառ ընաջընջ-
ման վտանգի առջև: Բանը նրանում չէ, բարբոսին, որ
հայ ժողովրդին զինական պաշտպանութիւն չեն դոյց
տալիս «մեծ դաշնակիցները», այլ նրանում, որ պաշա-
պանութեան գէպրում էլ նա չէ աղատւելու վտանգից,
որովհետեւ չափազանց կասկածելի է այդ պաշտպանու-
թեան տնկողութիւնը: Ինչպէս որ զերմանական զօրա-
մասերը, որոնց սրի վրայ կրթնած շատ լատ էր զգում
իրեն մենչկիկեան կառավարութիւնը՝ Վրաստանում,
օտիւլած եղան իրենց հայրենիքում կատարած յեղա-
փոխութեան պատճառով՝ Վրաստանից քաշւել, որից յե-
տոյ առաջ եկաւ հայ-վրացական պատերազմը, այնպէս
էլ վաղուչ Հայաստանից են քաշւելու «մեծ դաշնակից-
ների» զօրամասերը, որովհետեւ այսօրուայ այդ հոգրների
երկրում էլ աճում ու խորանում է ժողովրդական մատա-
ների գծողութիւնը և զարգանում ու բնդարձակում է
նրանց յեղափոխական շարժումը: Մնա այդ աւելի քան
հաւանական գէպրում՝ հայ ժողովուրդը ամբողջապէս
սրի կը քաշի, չէ մնալու նրա զաւակներից մէկը՝ նստաճի-

համար անգամ կարճատեւ, որ սրի վրայ տալիս, չօ-
չափումներով առաջ գնացող, պատահականութիւնների
վրայ քաղաքականութիւն կառուցող, համախարհն չեն
կանքի տնդենցը նկատի չունեցող և չփռնող դաշնակ-
ցական քաղաքագէտները հաշի չեն առնում այդ բոլո-
րը և գնում են այնպիսի ճանապարհով, որ պէտք է
բերէ ու կանգնեցնէ նրանց «հայրենիք աւերակների»
առջև, նրանք այնպիսի ճանապարհով են տանում ժողո-
վրդին, որ պէտք է զերեզման իջեցնէ նրան...

Սակայն Հայաստանի ղեկավար այդ կռուակցու-
թիւնը կարծես թէ «սխալուում» է: Մարդիկ կարծես
ուզում են հասկանալ, որ իմպերիալիստական թաշանչի-
ութեան և աւաղակութեան դարեջըմանում ակնարկ ան-
գամ չէ կարող լինել «մարդասիրութեան», «մանր ազ-
գերի աղատագրութեան» և նման «բարձր» զաղափար-
ների մասին (կարգայ «Յառաջ»-ի № 66 առաջնորդողը):
Մարդիկ կարծես համոզւել են, որ արեւմտեան իմպերի-
ալիստները միայն այն գէպրում կը պաշտպանեն հայ
ազգի (կարգայ բուրժուազիայի) շահերը, եթէ իրենց չա-
հերը զուգորդւն այդ շահերի հետ, հակառակ գէպրում
հայ ժողովրդի բնաջնջումը ոչ միայն խղճի խայթոց ա-
ռաջ չի բերի նրանց մէջ, այլ և իրենք կաջակցեն այդ
բռնական ընթացքին: «Մենք—բաւրաւում» է «Յա-
ռաջ»-ը—որ այնպէս միամտութեամբ հաւատում ենք
մեզ արած խոստումներին, որ այնպէս անկեղծ ենք
զէպի ուրիշները (այսինքն գէպի իմպերիալիստները),
մտնաւանդ երբ որանք բարձր զաղափարների անունից
են խօսում, չպէտք է մի բոպէ անդամ մոռանանք,
որ քաղաքականութեան մէջ այսօր էլ, ինչպէս միշտ
լոկ չան է արժէք ունեցողը, քաղաքական չոր ու ե-
տական հաշիւը («Յառաջ» № 66):

Բայց թող հայ բանասերներն ու գիւղացիները չբարձեն, թէ գաշնակցութիւնը իրօք որ սխալուել է՝ կեթէ «Յառաջը» անհրաժեշտ է գտել այսօր յիշեցնելու իւր կուսակցութեանը և, ի հարկէ, կառավարութեանը, բուրժուական քաղաքական իմաստութեան այդ այբուբէնը, սպա զա ինքնին ազատաց է, որ այդ մարդիկ թուժակարար են կրկնում այդ, *) ճիշտ այն պէս, ինչպէս թուժակարար, առանց իսկական իմաստն ըմբռնելու, արտասանում են այդ՝ «Յառաջ»-ի սրտակից և միենայն ծագումն ունեցող բարեկամները՝ հանդուգեալ Համբարձում Առաքելեանի աշակերտները—մշակական «մարքսիստները» (որպիսի ծագր ու ծանակ գիտութեան հասցէին, որ կարող է տեղի ունենալ միմիայն հայկական այլասեռւած և այլանդակ մտաւոր իրականութեան մէջ)։ Մի բան, որ թուժակարար կրկնում է, յաճախ էլ մոռացու է։ Տասնեակ տարիների ընթացքում սընւած ու կրթւած լինելով ւաղերսական քաղաքականութեամբ, իւրացրած ու մարմնացրած լինելով հզօրի գոնները մաշելու, սիրալիր ժպտից նրա գիրկը նետելու սկզբունքով, մարդիկ այդ այբուբէնը յիշում են միայն «չեռին թւով», այն ժամանակ միայն, երբ սարսափն սպառելը լարում է նրանց բոլոր նետրդերը, երբ ժողովրդի զանգւածների գլխին աղետը կատարւած է լինում, երբ «Ֆրանսը» փոխելու, նոր օրինաւայրա որդնելու հարց է ծագում նրանց խելակորոյս գանգերում։ Ղարաբաղի և Նախիջևանի արիւնալի գէտքերը, անգլիական զինւորական մասերի հեռացումը Հայաստանից սթափեցրին նրանց գինովցած գլուխները և ստիպեցին

*) Թուժակարար կրկնելը չի նշանակում, որ իրենք չեն գործադրում այդ այբուբէնը, երբ գործը մերարեւում է իրենց։ Իւրաքանչիւր քաղաքական նրանք, ի հարկէ, գործադրում են այդ միայն ընագղարար։

խոստովանել, թէ Անգլիան ունենալով Փօքր Ասիայում «չոր ու ետական հաշիւ», չէ կարող «հայի» դատի պաշտպանը հանդիսանալ։ Նրանք գեղեքում էին մթութեան մէջ, զիշատիչների շարքերում նոր պաշտպան օրոնում գլխիկոր։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից եկած առաջին սոխակը վերստին սղեւորւած է պիւր որոնողներին, զրդուում նրանց հիւանդոտ երեակայութիւնը և երազական թուշքների առաջ ընդարձակ սահմաններ բացում։ Ոչ միայն գաշնակցական, այլև գաշնակցականաման՝ «Մշակի» ծնունդ սիրացուները սկըսում են երգել «փառք ի բարձունս Աստծոյ»։ Ազգային միտքիկայի մշուշով պատած գանգերն սկըսում են փառարանել «Ամերիկայի ձեռքը», մեծարել այդ հզօր աջը, որ օժւած «անշահատէր» Բոկֆելլերի և Վարազդտց» Մորգանի մարդասիրութեամբ և հայասիրութեամբ՝ պիտի բուժէ «հայի» վէրքը։ Բայց երբ Ամերիկայի փետրագուրի սոխակը երգեց, «առանկ ալ կլլսյ, անանկ ալ կլլայ», որը Սուրմալուն և Չանգեղուրը օղողեցին արիւնով և ժողովուրդը կրկին քաղցածութեան մասունեց, երբ «մեր հին բարեկամը» «ազնիւ և ազատատէր» Փրանսիան իրան տէր ու տնօրէն հաշակեց Հայաստանի մի մասին ևս՝ աշխարհիս երեսին ըստ ինքեան «ամենալաւ, ամենաազնիւ, ամենաբարեաւոր, ամենահայատէր» Ամերիկայի չաւելեան համաձայնութեան, — «խոստումներին միամտութեամբ հաւատացող», ուրիշ խօսքով մեր ծծկեր քաղաքադէտները յիշեցին, որ «քաղաքականութեան մէջ լոկ շահն է արմէր ունեցողը», և կիտած յօնքերով սխեցին «լրջօրէն» մտածել հայ «աղդի» փրկութեան մասին, երբ և ուղի որոնել նեղ վիճակից նրան համե

լու համար։

Դա խոկցական կաւախարութեան և կուսակցու-

թեան իմպերիալիստական աշխարհում թափառաշրջելու հայ իշխող դատակարգի իղձերի իրականացումը ուղղ-մա- լոր ուղիներով մուրալու պատճառով է, որ Հայաստա- տանում հաստատվել և ամրապնդել է զժողովրդին դրու- թիւն, որը ստեղծային պարիսպներով պատել է ժողովրդի ամբողջ կամքը, ծով տառապանքի և տանջանքի ենթար- կել նրան, ստեղծել է մի սոսկալի կացութիւն, որ սպանում և խեղդում է ժողովրդին, տանում նրան դէպի վերջնական կորստեան անդունդը:

IV

Ո՞ՒՐ Է Ե Լ Ք Ը

Անդառնալի կերպով անցել են այն-ժամանակները, երբ ժողովուրդներն ու ազգերը ապրում էին իրենց սեփա- կան կեանքով, ինքնամիտ, սեփակա կեղևի մէջ՝ ա- ռանց յարաբերութեան և կախման մէջ լինելու հա- րեանների հետ կապիտալիզմի դարեշրջանում այդ յա- րաբերութիւններն այնքան են սերտացել, կախածու- թիւնն այնքան խորացել, որ մի ժողովրդի կեանքը դարձել է անհնարին առանց հարեանների և նայնիսկ հեռուոր ժողովրդների կեանքի հետ կապ ունենալու: Իսկ ֆինանսական կապիտալիզմը իւր ծայրայեղ գա- զաթնակէտին է հասցրել ժողովրդների կեանքի բնո- հանրոցում, միջազգայնացումը: Նա ամենասերտ կեր- պով մտեցրել և միացրել է բոլոր ժո- լովրդներին և հասարակութիւններին, ի մի ձուլել նրանց, համա- մարդկայնացրել նրանց կեանքը: Իմպերիալիստական պա- տերազմը, որի սոսկալի հետեանքները տարածել են բո- լոր ժողովրդների վրայ, և սոցիալիստական յեղափոխու- թիւնը, որը մուտք է գործել բոլոր երկիրները, կենդանի ապաշոյշներ են հասարակական կեանքի ընդհանրաց- ման և միջազգայնացման:

Մենք տեսնուք, որ մեր կեանքը կազմում է մի- ջազգային կեանքի մի ստանիկը, Տեսնուք, որ Հայաս- տանի ժողովրդի սոսկալի վիճակը դերազանցորէն այ- դիւնք է համաշխարհային բնոհանուր կացութեան: Գե- րադոյն ջանքերն անգամ, գերմարդկային նուանդնանգամ բոլոր ուժերի ծայրայեղ շարունակ անգամ չեն կարող փրկել բա մաշարշար ժողովուրդը տանջանքների ծովից, չեն կարող ազատել նրան բնաջնջման օրից: Եթէ դրանք կատարելու լինեն անկախ կերպով՝ երկրագնդի մի անկիւնում, աշխարհից կտրւած մի վայ- ղում: Պա ենթադրութիւն չէ և ոչ էլ երեակաշահան, մտածածին պատկերացում, այլ փաստ է, ցանկալի թէ անցանկալի միևնոյն է, կեանքում և իրակա ուժեան մէջ կատարւող երևոյթ: Որոշ տիպի մարդիկ տեսակա- նում ժխտում են կեանքի միջազգայնացումը, իսկ դորժ- նականում իրենց ծառայականութիւնն ու լակեցու- թիւը՝ իմպերալիզմի հանդէպ, հակաժողովրդական ըն- թացքն ու թշնամական դորժեկակերպը՝ Հայաստանի ժո- լովրդի հանդէպ—արդարացիում են հայկական կեանքի օպեցիֆիկ պայմաններով և ռմիջազգային դրութեամբ, Նրանք եւնում են աղերսալանն քաղաքականութիւնից, որի տանուակ ոտրիւնների որդեգրութիւնը շատ թանկ է նստել հայութեան վրայ, եւնում են զգացմունքի և գութ շարժելու յոյսից, որ միշտ հիասթափեցրել է հենց իրենց, եւնում են քրիստոնէական մարդասիրութեան սպասե- լիքներէ, որ միշտ մնացել են սին և ապարդիւն: Եւ կարծում են նրանք, որ այդպիսով կարող են ազդել ա- րեւմտեան իմպերիալիստներէ շահադիտական ու ոք բանա- կանութեան վրայ կամ քողարկել հայ իշխող դատակարգի ձգտումները: Սակայն կոյրերին և մտաւորապէս յետա- մնացներին անդամ պարզ է այսօր, որ իրականութեան

այդպիսի Երեմիայամբիտ ըմբռնումը, այդ իր էութեամբ
սքրագործ տախտիկան կորստարեր է Հայաստանի մո-
ղովորի ոչ միայն ազատագրութեան, այլև Ֆիզիքական
գոյութեան համար: Այդ ըմբռնումն ու տախտիկան պէտք
է տանելին և տարան Հայաստանը զէպի միջազգային
աշխարհակարգ, որը կուռն է կապիտալիստական աշխարհը
անասան պահելու, շահագործութիւնն ու կեղեքումը
սքրագործելու, պրոլետարիատի և մանր ազգերի ճնշումն
ու ստրկութիւնը ամուր և կանգուն պահելու և վերա-
հաստատելու համար: Այդ ըմբռնումն ու տախտիկան
պէտք է դարձնելին և դարձրել են Հայաստանի բանու-
թութիւնն ու գիւղացիութիւնը կոյր գործիք՝ իրենց սե-
փական ստրկութեան չլիքները կոխող, անբան մշակ-
ներ՝ իրենց սեփական կեանքի գերեզմանը փորող:

Ուր է ելքը, որն է այն ճանապարհը, որով վճա-
կանապէս և անտատան կերպով քայլելով՝ Հա-
յաստանի ժողովուրդը կարող է փրկել իրեն բնաջն-
ջումից, կարող է դուրս գալ զժոխային դրութիւնից, կա-
րող է ազատագրել իւր սերունդները ստրկութեան ա-
նարկ լծից:

Կան մարդիկ, և այդպիսիների թիւը բնութաւոր է,
կան նոյնիսկ կուսակցութիւններ, որոնք կարծամտօրէն
կարծում և անպատասխանատու կերպով ուսուցանում
են, որ յաւիտենականութեան անդունդի առջև կանգնած
Հայաստանի ժողովրդի «փրկիչ հրեշտակը» ամերի-
կեան իմպերիալիզմն է լինելու: Անգլիայից և Ֆրանսիա-
յից ապտակահարւած այդ զիմազուրկ հերոսները ամե-
րիկեան իմպերիալիզմն երկինք բարձրացնելու, անմեղ
աղանուս կերպարանքով ներկայացնելու, նրա առաքի-
նութիւնները դրստակու համար ուսուցանում են և հա-
ւատացնում ժողովրդին, որ Ամերիկան ոչ մի չափ չունի

ճաճկաստանում ընդհանրապէս և Հայաստանում մաս-
նաւորապէս, ուստի մանդատի խնդիրը նրա համար
բարեկործութեան խնդիր է, բրիտանիական մարդա-
սիրութեան մի ակտ: Այդ պատճառով էլ ցանկալի է
և բաղձալի, որ նա ստանձնէ մեր երկրի մանդատը,
պարզապէս մեր երկրի տէրն ու տնօրէնը դառնայ:
Միայն այդպիսով, երգում են խմբով անվեղար վար-
դապետները իրենց շարականը, կծագէ ազատութեան
արեւը հայ լուսաւորչական գմբէթի և Նոյի տապանը
ընկալած Մասիաի գլխին: միայն այդպիսով «հայ մարդը»
իւր պապենական երկրի տէրը կը դառնայ, միայն այդ-
պիսով հայ ազգը կը փրկէ իւր գոյութիւնը: Հարուստ և
ազնիւ, անշահ և մարդասէր ամերիկացիների հովանա-
ւորութեամբ հայոց երկիրը կը դառնայ ոչ թէ իմպերիա-
լիստական դադութ, այլ արքայութիւն, գրախտ, ազա-
տութեան հովիտ: Ուրիմն պէտք է ազօթքներ լղել առ
բարձրակ, պէտք է թափօրներ կազմակերպել խաչ ու
լուրվառով, մրմունջներով ու աղերսանքներով, որ-
պէսդի շարժել Ամերիկայի գութի, այլապէս կորած է
հայ ժողովուրդը...

Որպէտզի ժողովրդի ընդարձակ խաւերի համար
պարզ լինի այդ անփառաջայ տէրտէրների ու անշա-
պիկ տիրացունների կեղծիքն ու աղայամտութիւնը,
պէտք է ամենից առաջ այս հարցը տանք մեզ. արդեօք
Ամերիկան զեկամարում է այդ հարցում ևս շահասի-
րութեամբ, ապա՝ եթէ նա չափ ունի՝ ինչ՞ու է վարու-
նում մանդատը ստանձնելու, և երբորդ՝ ամերիկեան
մանդատը կարող է փրկել ժողովրդին զժոխային կա-
ցութիւնից:

Հայ տիրացուններն ասում են՝ Ամերիկան չափ չու-
նի: Իսկ ինչ են ասում իրենց ամերիկացիները: Հա-

յաստանի անկախութեան Ամերիկեան կոմիտէի նախագահ Զերարդ իւր մի կոչի մէջ հետեւեալն է ասում. «Շատ ամերիկացիներ այնպէս են կարծում, թէ Հայաստանի վերաբերմամբ մեր ունեցած հետաքրքրութիւնն առաջ է գալիս միմիայն մարդասիրական շարժառիթներից... Այսօր մեր ազգային շահը պահանջում է, որ օգնենք Հայստանին: Դա ամերիկայի զուտ տնտեսական շահն է, որ նկատի ունի հայ վաճառականների ամերիկացի փաստաբանը: Բացի դրանից կայ մի ուրիշ շահ էլ, որ աւելի բարձր է ու վսեմ, որ ոչ միայն ազգային է, այլ նաև միջազգային և որը վերաբերում է ոչ միայն ամերիկեան, այլ նաև եւրոպական իմպերիալիզմին. դա սոցիալիստական Ռուսաստանի դէմ կուելու պահանջն է, որի համար հայ ժողովրդի արիւնն են ուղում թափած լինել: Ահա ինչ է ասում համաշխարհային իմպերիալիստների ծառան՝ նոյն Զերարդը. «Հայկական միփոքրիկ հոգաշերտ է միայն, որ բաժանում է բուլղերկներին թիւրքերից ու թաթարներից: Հետեւաբար եթէ հայերին զանանք այն օգնութիւնը, որ մեծ չափով տւել ենք դրեթէ քոյոր մեծ ու փոքր ազգերին, այն ժամանակ պիտի դառնանք երկու կարեւորութիւնների հանդէպ,—կամ ստիպւած հաշտութիւն պիտի կնքենք թիւրքերի ու բուլղերկների հետ և այդպիսով վերահաստատենք Թիւրքիայի սարսափելի իշխանութիւնը (դա լեզական լեապոստ է, որ տաւած է հայերին վախճանելու և կաշառելու համար) և կամ քաղաքակրթութեան (այսինքն իմպերիալիզմի), պաշտպանութեան պատենէլ հանդիսացող հայերի բնաջնջումից յետոյ դաշնակից և նրանց գործակից պետութիւնների կողմից մեծ քանակներ պիտի ուղարկւեն Արեւելք թիւրքերի և բուլղերկների դէմ կուելու համար»:

Ամերիկայի միլիարդատէրերի այդ շահը մեր քաղաքական տիրացուներն անտես չեն տանում, ոչ. ինչհետեւ որովհետեւ քաղձալի են համարում հայ հարուստների և սրանց փշրանքներով ապրող թիրացու մտաւորականների համար ևս, միայն խարդախօրէն թաղցնում են հայ բանւորներից և զիւզացիներից, պնդելով, թէ Ամերիկեան Հայաստանում շահ չունի քոյորովն: Թիւրքերի աւած տեղեկութիւնների համաձայն՝ տնտեսական շահի վրայ մատնանշել են նաև գին. Հարբորդի միսիայի քաղաքացիական անդամները: Մանդատի հարցը տնտեսական տեսակէտից ուսումնասիրելով, նրանք եկել են այն եզրակացութեան, որ Հայաստանի մանդատը կուհնայ վերին աստիճանի բարենպաստ ազդեցութիւն Ամերիկայի արտաքին առևտրի վրայ:

Եթէ Ամերիկեան այդքան շահագրգռւած է Հայաստանով, ապա ինչո՞ւ է նա վարանում ընդունելու նրա մանդատը: Այդ հարցը ևս շատ դարձ է նրանց համար, որոնք իրերի ու անցքերի վրայ նայում են օրինակաւ կերպով, որոնք իրերն ու անցքերը տեսնում են այնպէս, ինչպէս կան, այլ ոչ թէ այնպէս, ինչպէս կուգինային, որ լինէին: Հասարակ և պատահական գուգադիպութիւն չէ, որ վարանումն հենց հանրապետականների շարքումն է. այսինքն ամերիկեան խոշոր բուրժուադիայի շարքերում: Ինչհետեւ կապիտալիստներն ասանց հաշի գործ չեն տեսնում, ասանց մեծագոյն օգտի ձեռնարկութիւն չեն սկսում: Ամերիկեան կապիտալի առջև խոշոր և ընդարձակ առաքելգներ, լայնածաւալ շուկաներ են բացւել, որ գոյութիւն չունէին պատերազմից առաջ: «Հելլոյնդ-Մանոմատ» թիւրքը հարգում է այն մասին, որ Եւրոպայի հիւսիսային երկրներում ամերիկեան առևտուրը հսկայական չափե-

քի է հասել: Ամերիկայից եկող համարեա իւրաքան-
շիւր շողենաւ (ստում է նոյն թերթը) Կոպենհագէն է
բերում ամերիկեան ֆիրմաների ներկայացուցիչներին:
Ենթադրում է, որ ամերիկական կապիտալիստները
կը տիրանան ամբողջ հիւսիսային Եւրոպային: Յայտնի
է նաեւ այն, որ ամերիկական կապիտալիստները ամեն
միջոց գործ են դնում Միքիլը տնտեսապէս գրաւելու:
Յրանսիական թերթերի տոնով, ամերիկական ամենա-
խոշոր աղցիոններական ընկերութիւնները ցանկութիւն
ունեն Միքիլում անցկացնել մի շարք նոր երկաթու-
գային մագիստրալներ, կառուցել ամբողջ քաղաքներ՝
տեխնիկայի վերջին խօսքի համաձայն: Միւս կողմից
առաջարկ կայ տիրանալու Հայաստանի մրայ, այն
երկրի վրայ, որի ժողովրդի սոսկալի կապութիւնը լո-
ւորովին ապշեցրել է գէն: Հարբուրդի միսիային, «Մի-
այն տեղումն է միսիան իսկապէս պարզել իրեն խնդրի
անատելի մեծութիւնն ու ծանրութիւնը այն պիտու-
թեան համար, որն ընդունելու է Հայաստանի ման-
դատը: Տիրանալ մի երկրի, որը ոչ միայն չնչին տու-
կոսներով է վարձատրելու պարոն կապիտալին, այլեւ
պահանջելու է սրանից զինական ուժեր—250 հազար
զինուոր՝ Հարբուրդի միսիայի գինուորական անդամների
կարծիքով դա մի լուրջ հարց է, որի մասին պիտի
լու խորհել եթէ ուրիշ տեղերում աւելի ձեռնառու և
շահաւէտ պայմաններ լինեն ապրանքներ ներմուծե-
լու, հում նիւթեր արտադրելու և կապիտալներ գոր-
ծադրելու, պարզ է, որ ամերիկական կապիտալիստը,
ինչպէս որ ամեն մի կապիտալիստ, կը գերադասէ այդ
տեղը, քան այն, ուր դեռ գինուորական ուժեր էլ են
ուշաք. մի բան, որ ոչ միայն տնտեսական, այլեւ քա-
ղաքական նշանակութիւն ունի, որը կապւած է թէ

Ամերիկայի և թէ ամբողջ աշխարհի ներքին քաղաք-
ական սխառացիայից: Բայց որովհետեւ շահաւէտ շուկա-
ները (ինչպէս օրինակ Միքիլը) դեռ հարցական են
այսօր, ուստի պէտք չէ տակաւին ձեռք քաշել համե-
մատաբար «անշահաւէտ» Հայաստանից: Կարցը թող
դեռ քաջըլի՝ մինչև որ միևնույն օր մի քիչ պարզուի:
Ահա Ամերիկայի վարաւումների բուն պատճառն ու
խմաւորը: Չտեսնել այդ՝ նշանակում է լինել մտքով
անյուսալի կոյր և սոսկալի բութ:

Սակայն Հայաստանի ժողովրդին բոլորովին հե-
տաքրքիր չէ այն, թէ Ամերիկան կը վերցնէ ման-
դատը, այլ մտահոգիչ է այն, թէ ամերիկեան ման-
դատը կը փրկէ նրան տանջանքներից ու սոսկալի կա-
ցութիւնից, կը տանէ արդեօք նրան՝ դէպի երջանիկ և
ազատ կեանք: Այդ հարցի կարգի, պարզ և շիտակ
պատասխանը պէտք է լինի—քաջարժակապէս ոչ: Մի
կողմը թողնենք այն, որ ամերիկական կապիտալը ոչ
միայն Տայրի սխառմով, այլ նաեւ գաղութային կա-
պիտալի ամենաանյապ ախորժակով ծծելու է Հայաս-
տանի աշխատաւոր ժողովրդի քրտինքը, թոյլ չէ տա-
լու նրան իր կողմէ մէջքն ուղղելու, ազատ շունչ քաշե-
լու, հազցնելու է նրան ստրկութեան շղթաները, դնե-
լու նրա վրին ծանր լուծ: Ենդենք միայն որ ման-
դատը վերցրած դէպքում էլ Ամերիկան չէ կշտացնելու,
չէ հազցնելու քաղցած, բոկոտն ժողովրդին. չէ վերա-
կանդնելու նրա քայքայւած տնտեսութիւնը, որովհետեւ
կապիտալը սովորութիւն չունի մարդասիրութեամբ
առաջնորդել, նրա էութեանը հակառակ է «անօգուտ
փոխանակութիւնը». իսկ այն, ինչ որ նա կարող է
տալ «նաւասար» փոխանակութեամբ, այնքան չնչին
կը լինի, որ ծով-կարիքում կը կորչի: Բացի գրանից՝
պահանջւած «նաւասար» էկիվալինտն էլ այնքան խո-

չոր կը լինի, որի ծանրութիւնից կը խեղդի ոչ միայն աշխօրայ, այլև վաղայ սերունդը: Շեշտելու է նաև այն, որ ամերիկեան կապիտալը նորից ու նորից գինելու է հայ ժողովրդին և քշելու նրան դէպի եզրայրաստան պատերազմ այն բանւորներին և գիւղացիներին դէմ, որոնք կուռում և արիւն են թափում յանուն ճշմարտ և ստրկացած ժողովրդներին ազատագրութեան, յանուն շահագործւած և հարստահարւած բանւորութեան և գիւղացիութեան իշխանութեան, յանուն սոցիալատական կարգերի իրականացման: Միւս կողմից՝ մենք ականատես ենք այն արտասոց փաստին, որ սոցիալիստական կուռի ճակատը քանի գնում՝ այնքան աւելի ընդարձակւում է: Կոխը բռնկել է նաև Ամերիկայում, զործագորչային շարժումը օրըստօրէ աճում է, տեղի են ունենում ընդհարումներ սատիկանութեան հետ: Փրանսիական բուրժուական թերթերը ոչ միայն անհանգստացած տոնով, այլ չափազանց մռայլ գոյնիւով են նկարագրում գրութիւնը Ամերիկայում: Նրանք մինչև անգամ ստիպւած են շեշտելու, որ այդ երկիրը «արագութեամբ մոտենում է քառասային դրութեան» (Շէկստե Պարի): Ամերիկայի յեղափոխութիւնը վերջ պիտի առայ այն մանդատին, որը ստանձնած կը լինեն այդ երկրի իմպերիալիստները, և այդպիսով հայ ժողովուրդը կրկին կը մտայ իւր դժոխային դրութեան մէջ:

Ամերիկայի տատանումները մի կողմից, ամառական օգնութեան ձգձգումը միւս կողմից, ինչպէս նաև այն, որ այնտեղ ևս «քառասային դրութիւն» է ստեղծւած, առաջ են քերել չոկալ մտածող՝ դաշնակցականների և «դեմոկրատական» մտաւորականների մէջ յառաճող և տարտամ մտքեր: «Փրկող» չէ կարող լինել այն «ձեռքը», որ երևում է, հաշիւներ և տեսնում, շահներ համարում, թոյլ է տալիս, որ իր քովը «քառաս

ստեղծի: Պէտք է որոնել այնպիսին, որը կողմակից է նրան և աշխօր էլ պատրաստ է անդելու: Հայաստանի անկախութեան վրայ, ունայ ուժ է ներկայացնում և չէ հանդուրժում «քառաս»: Միայն այդպիսի քարեկամը իրօք կարող է փրկել հայ ժողովրդին: Այդպէս են մտածում ամերիկացի քեռուց հիսաթափւածները:

Եւ բուրժուազիայի այդ սպասաւորները սրբապատկերները գրկած որոնում են այդ «ամենագոյաւոր փրկիչին» քթի տակ մրմնջալով.

— Տէր, ուղղեա մեզ գգնացա մեր:

Սակայն պէտք չէ ունենալ միջիմառը մոմանոց լապտեր, որպէսզի դռնել հայ բուրժուազիայի սրտակից քարեկամին, նրա դրպանի հատաւորիմ պահպանին: Սրա օգտակար հզօրութիւնը, բանւորութեան և գիւղացիութեան վրայ սաքսափ ազդող մարակը տակաւին կենդանի են հայ կապիտալիստների յիշողութեան մէջ, տակաւին փայլալուծ են նրանց սրտի խօրքերում: Եթէ Ռուսաստանի հոկտեմբերեան բանտորա-գիւղացիական յեղափոխութիւնից յետոյ հայ բուրժուազիան սար ու ձոր ընկած՝ իրեն համար պաշտպան ու նեցուկ էր սրտնում, ապա դա այն պատճառով էր, որ նրա երազները խորտակւել էին, հեռանկարն երբ չափազանց ազօտացել: Իսկ այժմ նրա երեւելայութեան մէջ յոյսի շողեր են սկսել փայլել: Անտանտայի իմպերիալիստները, ճիշտ է, «մարդկութեան և քրաղաքակրթութեան» սրեններն և հզօր պաշտպաններ, բայց որովհետև «քաղաքականութեան մէջ լոկ շահն է արժէք ունեցողը», իսկ հայ կապիտալիստների՝ պահանջների ուղղութիւնը մատնացուցել և սրբադործել, է տակաւին պատերազմի սկզբում (տես նախորդ գլխի սկիզբը), ուստի «հայ ժողովրդի» համար շահեկան է մեր կողքի աչն ոյժը, որը պատրաստւում է դալու և իր

հուժկու խօսքը ասելու: Իսկ զաշխակցականներն *) և միւս tutti quanti վարձկան մտաւորականներին (Իշխան-հաններ, Անանուններ) աւելի ձեռնառու է բուրժուազիայի հետ և նրա յետեւից քայլելը, քան բանւորութեան և գիւղացիութեան ստրկական շղթաների ջախջախելը: Իրա համար էլ բուրժուազիայի այդ քարեկամը գերադասել է, քան բանւորագիւղացիութեան բարեկամը:

Հայ ունեւորներ, կիզեքման և շահագործման ընտելացածներ, ժողովրդի տառապանքի, արեան և արցունքի վրայ իւր երջանկութիւնը կառուցողներ, համար այդ փրկարար փառքը Դենիկինն է, Ռոմանով-եան Ռուսաստանը: Ոչինչ, եթէ ցարական այդ արխանաւոր զօրապետը նաև Հայաստանի ժողովրդին խեղդէ արեան ովկիանոսի մէջ, ոչինչ, եթէ «կամաւորական» բանդաները կրակի անթաղին այն որբանոցները ու հիւանդանոցները, որոնց ամբողջութեան անունն է Հայաստան: Ոչինչ, եթէ Դենիկինեան Ռու-

*) Մենք խօսում ենք միմիայն դաշակցութեան մասին այն պատճառով, որ այդ կուսակցութիւնն է Հայաստանի զեկալարը, իսկ միւս կուսակցութիւնները ոչ ուժ ու ազդեցութիւն ունեն, ոչ էլ կշիռ ու նշանակութիւն: Այսպէս կոչւած «հայ ժողովրդական» կուսակցութիւնը որ նախկին ժաւհականութիւնն է միայն աւելի ցայտուն դասակարգային կերպարանքով, թուղթ է միայն մրտուած և կաֆէ Մոսկայում նստած ջղայնամարտի գանդաւառում: Եւ ինչու, իբր դասակարգի զորքը ինքը չէ կատարում և առջ քանում, այլ դաշակցութիւնը: Մոցիալիստ-լեզափոխականները, որ էութեամբ նոյնն են, ինչ որ դաշակցականները՝ միայն սուսական նոցի վրայ բուսած և Հայաստանում տիկլիմամիլացիայի (օգրեսիւթիւն) չենթարկած, ճառարանութեամբ և գրեւորա-նութեամբ են միայն զբաղւած, որ կատարում, բայց և կարգում են միայն պարլամենտի չորս պատգամաւորները: Հայ մենշեիկները, որ միշտ եղել են փոքրամիտ և վրայ մենշեիկների սրտից կալած, այժմ Անդրկովկասեան իրադարձերի շնորհիւ՝ բոլորովին քայքայուել են՝ նրանցից մի քանիսը մնացել են վրայ մենշեիկների պնակալէզի գերած, մի քանիսը թաւալւում են անճարակութեան մէջ, մի քանիսն էլ հայոց երկնակամարի տակ ապրում են Ռուսաստանի երբեմնի ազդեցիկ, իսկ այժմ դեռօրի հասարակած կուսակցութեան յիշողութիւններով:

ստանանը հայ աշխատուոր, արնաքամ և ուժապաս-
ժողովրդի կենդանի մնացորդների վրայ վերստին
հաստատել իւր կալւածատէրերի և կապիտալիստների
ստրկութեան սպանիչ լուծը: Այդ բոլորը ոչինչ, եթէ
միայն հայ բուրժուազիան այդ միջոցով կարող լինի
հասնել այն նպատակին, որը նա դրել է հենց պատե-
րազմի սկզբում:

Այդ տխմարները չեն կարողանում հասկանալ՝
որ եթէ Դենիկինեան ներկայացուցիչները Փարիզում
այսօր տակաւին պնդում են Տաճկական Հայաստանի
«անկախութեան» վրայ, դա գեո չէ նշանակում, որ
վաղն էլ նրանք նոյնն են պնդելու: Տաճկաստանի դէմ
պատերազմը սկսելու նախօրեակին ռուս իմպերիա-
լիստները քաղցր երգեր էին երգում Տաճկական Հա-
յաստանի «ազատագրութեան և անկախութեան» մասին,
բայց երբ ռուսական զօրքերը հասան Վան և Էրզրում,
վարձկան «գիտնականների» առջև ոսկիներ նետեցին.
որպէնզի սրանք նախագիծ մշակեն «ճիշտապէս կու-
զակութիւն» հիմնելու համար: Պատմութիւնը կարճա-
միտ մարդկանց համար չի գրւած: Այո, կայրերը չեն
կարողանում բմբռնել, որ եթէ այսօր սև Ռուսաստա-
նի շահը դուզորդում է հայ «ազգի» շահի հետ, դա
դեռ չի նշանակում, որ այդ զուգորդութիւնը յաւան-
նական է: Վաղը՝ իմպերիալիստական և սոցիալիս-
տական հակադասական գոտեմարտութեան օրօք գէղ-
քերը կարող են այնպէս դասաւորուել, որ անհրաժեշտ
լինի Դենիկինեան և Մուստաֆա-քեմալեան զօրքե-
րի միացումը: Որքան սիրելի լինեն Դենիկինին հայ
բուրժուազիայի զինւորները՝ դաշակցականներն ու
փոճաւում մտաւորականները, այնուամենայնիւ տա-
ճիկ փաշաների զօրքը աւելի սիրելի է, որովհետեւ

վերջինս աւելի խոշոր բէալ ուժ է ներկայացնում, քան «արմեաշկաներին» ոյժը թղթի վրայ: Եւ այդ միացումը կը կատարւի հայ ժողովրդի իսպառ բնաջընջման գնով:

Դաշնակցութեան և նրա կառավարութեան դէպի Դենիկներ ունեցած սիմպատիան քացարձակապէս ապացուցում է, որ այդ կուսակցութեանը հետաքրքրում է ոչ թէ հայ ժողովրդի շահը, այլ հայ բուրժուազիայի շահն ու հաշիւները, ոչ թէ հայ բանւորութեան և գիւղացիութեան լաւագոյն ապագան, այլ հայ կապիտալիստների և վաշխատունների շահաւէտ ապագան: Ինչպէս որ մինչև այժմ այդ կուսակցութիւնը փորձեր է արել Հայաստանի ժողովրդի սկիօրների վրայ կառուցելու հայ բուրժուազիայի գերիշխանութիւնը, նոյն ժողովրդի շինքին կապիտալ արեմտեան իմպերիալիզմի ստրկութեան երկաթէ լուծը, այնպէս էլ վաղը նա փորձելու է ձգտել հայ ժողովրդին յանուն ոտու և հայ իմպերիալիստների աւագակախմբի:

Ո՛չ, Հայաստանի ժողովրդի փրկութեան ուղին այնտեղ չէ, ուր բռնում են պատէպատ ընկած դաշնակցականները և միւս աղգայնական յեղեղուկ մտաւորականները: «Փրկութեան» այն ուղին, որ ցոյց են տալիս այդ ըրեկամիտ, իրական կեանքի աւած դասերը մտապիտեան մատնոյ մարդիկ, ընդհակառակը, տանելու է ժողովրդին դէպի նոր արհաւիրքներ, դէպի նոր դժոխք, կապիտալիստների աշխարհում, իմպերիալիստական քառակում նա չէ կարող դանել անկեղծ, անշահաւէր բարեկամ, իրեն իրապէս փրկող ձեռք: Երկաթի և արեան միջոցով պահւող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրայ կառուցւած այդ աշխարհը չէ, որ պիտի փրկէ հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն մշխարհը, որի արշալոյսը ըացել է ոտսական հիւսիսում:

Միակ ելլը այդ է, ուրիշը չկայ: Եւ այդ միակ ելլի վրայ մատնանել է և վերստին մատնանում է Հայաստանի ժողովրդի միակ բարեկամը—նոր աշխարհի համար հերոսաբար պայքարող միջազգային բանւորութիւնը և աղքատ գիւղացիութիւնը:

Վերջին երկու տարիների անցուդարձը թէ համայն աշխարհում և թէ մեր՝ երկրում՝ թերահաւատներին անգամ համոզեց և կոյրերին անգամ տեսանելի դարձրեց, բացի ինարկէ ժողովրդի պարզ և թափուն թշնամիներից և անուղղելի դաւաճաններից, որ անկարելի է ժողովրդական լայն խաւերին այժմեան տանջալից կեանքից փրկել, նրանց համար նոր կացութիւն ստեղծել, աշխատաւորական նոր հասարակակարգ հիմնել—այդ բոլորը չի կարելի իրագործել կապիտալի տերկայացուցիչների հեռ ձեռք-ձեռքի տաւած, նրա գերիշխանութիւնը ընդունելով, հին հասարակակարգը պահպանելով: Անհնարին է հանդուրժել, որ չորս տարւայ չտեսնւած-չլուած քանակութեամբ զոհերի վրայ շինել այն կեանքը, որին պարզապէս ձգտում և տենչում են աշխարհիս հզօրները և հարուստները, կառուցւեն այնպիսի կարգեր, որոնք պէտք է վերստին հատատեն և ամրապնդեն կապիտալի տառապնած լուծը, տարածեն նրա սպանիչ ճիրանները, խորացնեն հարիւր միլիոնաւոր բանւորների և աղքատ գիւղացիների տառապանքն ու հեծեմանքը: Սուս է, թէ մանր և թոյլ ազգերը պէտք է ազատւեն օտար լծից և հատաւան իրենց ինքնուրոյն կեանքը՝ ազատ կարգերի վրայ: Աղգային աղքատ երկիրները Փիկցիա են, դրանք փաստորէն օտար և հզօր կապիտալիստների համար զաղութ-

ներ են, որ կառավարում են դրանց նովանսորութեան տակ զտնող ազգային իշխող դատակարգի ձեռքում զէնք դարձած մանր-բուրժուական կուսակցութիւններից: Այդ պատճառով էլ բոլոր հզօր ու թոյլ երկրներն, բոլոր մեծ ու փոքր ազգերի բանւորութեան և աղքատ գիւղացիութեան կենդանի և գործօն, խոհուն և լրջամիտ մասը իրականութեան փորձից համոզւել էր, որ իմպերիալիստական բանակը չէ ցանկանում և չէ կարող տալ այն, չէ իրականացնում և չէ կարող իրականացնել այն, ինչ որ անհրաժեշտ է ժողովրդական լայն մասսաների կեանքի բարւոյրմանը, համապատասխանում է նրանց շահերին ու ձգտումներին, փրկում է նրանց այժմեան անտանելի ծանր կացութիւնից: Եւ ամենավճռական կերպով նրանք յարել են համաշխարհային սոցալիստական բանակին, որ զնկավարում է կոմունիստական կուսակցութիւնը:

Բոլոր երկրներում, բոլոր ազգերի մէջ առաւել կամ նւազ չափով մուտք է գործել յեղափոխական շարժումը: Թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում, թէ Ասիայում և թէ Աֆրիկայում ժողովրդական ստորին խաւերը ուղղել են իրենց կոր մէջքերը, լեռան անյողդողութեամբ ոտի կանգնել և խրոխտ ու վճռական ձայնով հաշիւ են պահանջում աշխարհի հզօրներից իրենց եղբայրների ծով արեան համար, հատուցում են պահանջում իրենց զաւակների գերմարդկային տառապանքների փոխարէն: Գերմանիայի և Ֆրանսիայի, Անգլիայի և Միացեալ Նահանգների, Բելգիայի և Շվեյցարիայի բանւորները պահանջում են իրենց իշխող դատակարգներից պետութեան ղեկը, գործադուլներով ու ցույցերով ստիպում են նրանց հրաժարւել քաղաքական և անտեսական արտօնութիւններից, պահանջում են վերջ տալ Գննիկինեան սպիտակ Ռու-

սաստանին օժանդակելու՝ ընդդէմ Խորհրդային կարմիր Ռուսաստանի, պահանջում են վերջ տալ բարոյութեան և հովանաւորութեան պատրւակով փոքր և թոյլ երկրները զաւթելուն, խեղճ և թշաւ ժողովրդները ստրկացնելուն: Լեհաստանի և Ֆինլանդիայի, Մերձ-Բալտեան նորակազմ պետութիւնների և Ռուսիայի, Բաղւի և Վրաստանի բանւորներն ու դիւղացիները պահանջում են աշխարհակալ դիշատիւններից հեռու քաշել իրենց վիշապային թաթերը, պահանջում են նրանց թեւերի տակ իրենց դատակարգային գործերը շփոթ մեծամեծներից, սրանց հլու հնազանդ և աղջային բուրժուազիայի շահերի պահպան, ձգտումներին կեանք ներշնչող՝ այսպէս կոչւած «գեմոկրատական» կառավարութիւններից հեռանալ ասպարէզից և թողնել, որ իրենց պատկանող երկրներում հաստատեն սեփական բանւորա-գիւղացիական խորհրդային նախապետութիւն, ստեղծեն սեփական սոցիալիստական նայրենիք՝ արնաքամ եղած, քաղցածութեան մահուած, ոգժասպառ, կեղեքւած, տանջւած, տառապող ժողովրդների համար լուսաւոր կեանք ստեղծելու:

Հայ բանւորութիւնն ու գիւղացիութիւնը պէտք է անհրաժեշտօրէն հետեւի բոլոր երկրների ու ազգերի եղբայրակից ու վիճակակից բանւորութեան ու գիւղացիութեան օրինակին, պէտք է վճռականապէս և անտատան կերպով բռնի բանւորա-գիւղացիական յեղափոխական ուղին:

Եթէ Հայաստանի ժողովուրդն ուզում է փրկել իրեն սոսկալի վիճակից, ձգտում է ապրել և պահպանել իւր գոյութիւնը, ելք է որոնում ազատելու իրեն կորստեան անդունդից. — նա պէտք է առնաւովճռա-

կան կերպով յարէ միջազգային սոցիալիստական բանակին՝ ընդդէմ միջազգային իմպերիալիստական բանակի:

Եթէ Հայաստանի բանուորներն ու դիւղացիները ցանկանում են ազատագրել իրենց, ձգտում են վերջ տալ իրենց հայրերի ու մայրերի, եղբայրների ու քոյրերի, զաւակների ու մանուկների տանջանքներին ու տառապանքներին, հառաչանքներին ու արտասուքին, — նրանք պէտք է ըմբոստանան արեւմտեան արնեխում, խարդախ ու նենգամիտ իմպերիալիստների դէմ, անխնայ կռիւ յայտարարեն՝ ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ Հայաստանում կապիտալի տիրապետութիւնն ու իշխանութիւնը պահպանող և ամբարնող իմպերիալիզմի դէմ, պէտք է դորձակցեն այն ուժերին, որոնք տապալել են ուզում, քնաջինջ անել են ձգտում մարդկութեան մեծագոյն մասը ստրկացնողներին:

Եթէ Հայաստանի տառապեալ ժողովուրդը ուզում է ունենալ իրօք ազատ երկիր, սեփական հայրենիք, սրտին ու մտքին մօտ քնաւայր, — նա պէտք է վճառականացէս պահանջէ հայկական իշխող դատակարգից և դաշնակցական կառավարութիւնից՝ հնազանդել իւր անտատան կամքին. նա պէտք է ձգտէ յաղթահարել բոլոր խոչընդոտները, հաստատելու իւր սեփական իշխանութիւնը. կառուցելու իւր հարազատ բանուորա-դիւղացիական պետութիւնը, ստեղծելու իւր ազատ սոցիալիստական հայրենիքը:

Համամարդկային կեանքի վերջին տարիների պատմութիւնը և նրա ընթացքը ցոյց են տալիս, որ մարդկային սոցիալական կեանքի հին ձևերը, որ մարդկութեան խոշորագոյն մասի սարսափելի տառա-

պանքների աղբիւրն են կազմում, դատապարտւած են անխուսափելի մահան, անդառնալի կորստեան: Պէտք է տապալեն այդ ձևերը և կառուցեն հասարակական կեանքի նոր ձևեր՝ սոցիալիստական հասարակարգ: Այդ նոր ձևերի կառուցողները, նոր հասարակարգի հիմքը դնողը բանուորութիւնն է աղքատ գիւղացիութեան հետ միասին: Նոր կեանքը պէտք է հիմնւած լինի ժողովրդի այդ ոտնահարւած խաւերի շահերի համաձայն, արդար և հաւասար ազգամիջկան յարաբերութիւնների վրայ: Հասարակութեան այդ նոր կեանքի քաղաքական կազմակերպութեան նոր մեկը բանուորական եւ գիւղացիական խորհրդների հանրապետութիւնն է. այն պետութիւնը, որի գերագոյն իշխանութիւնը պատկանում է աշխատւոր ժողովրդին, զանաւում է բանուորութեան և գիւղացիութեան ձեռքում: Այդ իշխանութիւնը, որ ժողովուրդը ինքն է, հիմքից քանդելու է հին կառուցւածքները, արմատապէս փոխելու է անտեսական և սոցիալական, քաղաքական և միջազգային յարաբերութիւնները:

Հիմնելով Խորհրդային հանրապետութիւն Հայաստանում, իւր ձեռքն առնելով քաղաքական իշխանութիւնը, հայ ժողովուրդը ամենեց առաջ կապահովէ իւր Ֆիզիքական զոյովիւնը: Խորհրդային իշխանութեան առաջին հզօր հանրապետութիւնը, առաջին սոցիալիստական մեծ երկիրը — բանուորագիւղացիական Ռուսաստանը իւր հումկութեան պաշտպանութեան տակ կտանէ Հայաստանի տառապեալ ժողովրդին: Մտնելով այդ հզօր երկրի արբիտայի մէջ, Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը կը հաստատէ հաւասար և արդար յարաբերութիւններ զանազան ծագում ունեցող ժողովրդներին միջև թէ երկրի ներ-

սում և թէ դրսում: նա միանգամից և ընդմիջա վերջ
կրտսյ սահմանային այն անմիտ և արիւնտու՝ վէճերին,
որ մղում են Թիւրապետող դասակարգերը ժողովուրդ-
ների անունից, իապառ կոչնչացնէ այն սոսկալի սու-
բը, որ ձօձում են իշխող դասակարգերը պրացի ժո-
ղովուրդների գլխին, կը վերացնէ այն թշնամութիւնն
ու անհրաժեշտը, որ ժողովրդի թշնամիները ազա-
տարածել են նրանց մէջ: Եւ բանւորապիւղացիական
մեծ Ռուսաստանի կարմիր բանակը ոչ ու հաանդ
սասանալով տեղական կարմիր դաւակներէց, ոչ միայն
հաստատ կը պահէ այդ եղբայրական յարաբերութիւն-
ները, այլ և կուրծք դէմ կը տայ այն իմպերիալիս-
տական կազմին, որը համարձակութիւն և յանդգնու-
թիւն կուեննայ խանդարեկունոր կեանքի կառուցումը,
խառնութիւն սերմանելու ընկերական յարաբերու-
թիւններ հաստատուել ժողովրդների միջև: Կապիւրով
իւր բաղդը Խորհրդային Ռուսաստանի հերոս ժողո-
վուրդների բաղդի հետ, Հայաստանի ժողովուրդը կը
սասանայ ընկերական օգնութիւն՝ իւր դոյութիւնը
պահպանելու և ապահովելու, եղբայրական օժանդա-
կութիւն՝ իւր անտեսական կեանքը վերանորոգելու
և վերաշինելու: Կը վերանան ըստր այն՝ արհեստական
խոչընդոտները, որոնք կաշկանդել են մեր ժողովուրդ-
ըը, պատենէլ քաշել սրա և հարեան ժողովրդների
անտեսական յարաբերութիւնների միջև, խափանել
աշխատանքի արգիւնքների եղբայրական փոխանակու-
թիւնը: Ոչ միայն առանց արգիւնքների, այլ և կազմա-
կերպած օգնութեամբ և պարտադիր օժանդակու-
թեամբ Խորհրդային Հայաստանը կստանայ Խորհրդ-
ային մօտաւոր և հեռաւոր դրացիներից այն ամենը,
ինչի կարիքը նա զգում է սուր կերպով, և կը տայ

նրանց այն, ինչի կարիքը զգում են նրանք: Մասնա-
ւորի ու արեւելքի հաւատար և արդար բաղաւորի մի-
ջոյով Խորհրդային Հայաստանի ժողովուրդը կը լին-
վեալն իւր տառապանքը և կսկսէ ամօրել իւր
մարմնի այն խոցերը, որոնք խոր սրմատներ զգած՝
հիւժում և ուժաւորաւ են անում նրան ալժմ:

Այդպիսով ապահովելով Հայաստանի ժողովրդի
Ֆիզիքական գոյութիւնը, փրկելով նրան սրի հարած-
ներից և քաղցի ու հիւանդութիւնների հրամաններից,
Խորհրդային իշխանութիւնը կտնդէ ժողովրդի
համար իմպիալի հոչքները, այնպիսի բնավայր, ուր
նա ապրելու է ոչ թէ տանջելու, առաւարելու, հաշ-
տանդակելու և կեղծելու, այլ բարգաւաճելու, առա-
ջադիմելու, դարգւնելու և ազնւանալու համար: Զե-
զորացնելով տիրապետող և իշխող տարրերին, վերաց-
նելով նրանց արտօնութիւններն ու շահագործութիւն-
ները, նա հաստատելու է այնպիսի հասարակարգ,
որը նիւթական հարաւորութիւն է տալու վերացնել
ըստր անարդարութիւններն ու անհաստատութիւնը,
բաւարարելու է մարդկային բնական ձգտումը—ապրելու
մասնիկ և զղալ:

Ահա դեռ է միակ ելքը:

18 դեկտ. 1929 թ.



9122 6 25 СЛРР.

Исполнитель: Нехицкая И. И. Комиссарият по делам
Армян, 1-й этаж, Соборная № 31

ՀՀ Ազգային գրադարան



NL0686132

